



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
Յ-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Խոշտանգման արգելք

2023 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ

Պատրաստվել է քարտուղարության կողմից: Դատարանի համար պարտադիր ուժ չունի:

Սույն փաստաթղթի էլեկտրոնային կամ տպագիր տարբերակն ամբողջությամբ կամ մասնակի թարգմանել և/կամ վերարտադրել ցանկացող հրատարակողներին կամ կազմակերպություններին խնդրում ենք լրացնել *request to reproduce or republish a translation* ձևը՝ թույլտվության ընթացակարգի վերաբերյալ տեղեկանալու համար:

Եթե ցանկանում եք տեղեկանալ նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույցների ընթացիկ թարգմանությունների մասին, խնդրում ենք անցնել հետևյալ հղմամբ՝ *pending translations*:

Սույն ուղեցույցը թարգմանվել է «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի կողմից, որը ֆինանսավորվում է Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամի կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող 2023-2026 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն թարգմանության բացառիկ պատասխանատուն է հանդիսանում վերոնշյալ ծրագիրը:

Սույն ուղեցույցի բնօրինակը կազմվել է անգլերեն: Այն պարբերաբար թարմացվում է, և վերջին անգամ՝ 2023 թվականի օգոստոսի 31-ին: Այն կարող է ենթարկվել խմբագրական վերանայումների:

Փաստաթուղթը կարելի է ներբեռնել <https://ks.echr.coe.int> կայքից: Հրատարակվող թարմացումների համար հետևե՛ք Դատարանի թվիթերյան էջին՝ <https://twitter.com/echrpublication>:

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2023 թ.

Բովանդակություն

Ծանոթագրություն ընթերցողի համար.....	6
I. Ընդհանուր նկատառումներ	8
Ա. 3-րդ հոդվածի մեկնաբանությունը	8
Բ. Պետության պարտավորությունները 3-րդ հոդվածի ներքո.....	8
Գ. 3-րդ հոդվածի շրջանակը	8
Դ. Արգելված վերաբերմունքի կամ պատժի տեսակները.....	9
1. Խոշտանգում.....	9
2. Անմարդկային վերաբերմունք կամ պատիժ	11
3. Նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ.....	11
Ե. Կապը Կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածների միջև.....	13
II. Պետության ներկայացուցիչների կողմից կամ նրանց օժանդակությամբ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը	15
Ա. Նախնական դիտարկումներ	15
Բ. Ապացույցների գնահատում.....	15
1. Ապացուցման չափանիշ	16
2. Ապացուցման բեռ.....	16
Գ. Պետության ներկայացուցիչների կողմից ուժի գործադրում.....	16
1. Ընդհանուր նկատառումներ.....	16
2. Չսպման հատուկ գործիքների կամ միջոցների կիրառում.....	17
Դ. Մերկացմամբ զուգորդվող կամ ինտիմ անձնական խուզարկություն	19
Ե. Չինվորական ծառայություն	19
Զ. Ազատությունից զրկման պայմաններ.....	19
Է. Բժշկական սպասարկումն ազատությունից զրկման ընթացքում.....	20
Ը. Տուժողի ազգականների տառապանքը.....	20
1. Նախնական դիտարկումներ	20
2. Անհետ կորած անձանց ազգականներ	21
3. Մահվան հաստատված դեպքեր	21
4. Դիակների հետ վարվեցողություն	22
5. Այլ.....	22
Թ. Մեղադրական դատավճիռ և պատժի նշանակում.....	23
1. Զրեական պատասխանատվության տարիք.....	23
2. Լրջորեն անհամաչափ պատիժներ	23
3. Մահապատիժ	24
4. Ցմահ ազատագրկում.....	24
Ժ. Հանձնում և արտաքսում.....	26
Ի. Հարկադիր բժշկական միջամտություններ.....	26
ա. Ընդհանուր սկզբունքներ	26
բ. Հարկադիր կերակրում.....	26
գ. Հարկադիր հոգեբուժական բուժում	27
դ. Հարկադիր ամլացում և հղիության հարկադրված արհեստական ընդհատում (արբորտ).....	27
ե. Մարդու մարմնից թմրամիջոցներ և այլ ապացույցներ վերցնելը.....	28

III. Պաշտպանությունը ոչ պետական սուբյեկտների իրականացրած խոշտանգումից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից.....	29
Ա. Պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակը.....	29
Բ. Պետության պոզիտիվ պարտավորությունների բնույթը.....	30
1. Պատշաճ նորմատիվ իրավական բազա ձևավորելու պարտավորություն	31
2. Կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պարտականություն	31
Գ. Որոշ օրինակներ.....	32
IV. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին մեղադրանքները քննելու պարտականությունը	33
Ա. Դատավարական պարտավորությունների շրջանակը.....	33
Բ. Քննության նպատակը	33
Գ. Ուսումնասիրության բնույթը և աստիճանը.....	34
Դ. Քննության չափանիշները	34
1. Նախնական դիտարկումներ	34
2. Անկախություն	35
3. Համարժեքություն	36
4. Անհապաղություն և ողջամիտ արագություն	37
5. Հանրային հսկողությունը և տուժողի մասնակցությունը.....	38
Ե. Քրեական հետապնդմանը, պատժին և հատուցմանն առնչվող խնդիրները.....	39
Զ. Ատելության հիմքով կատարված հանցագործությունների քննություն.....	40
Է. Դատավարական պարտավորություններ անդրսահմանային կոնտեքստներում	41
Ը. Դատավարական պարտավորությունների վերականգնում	41
Մեջբերված գործերի ցանկը	43

Ծանոթագրություն ընթերցողի համար

Սույն ուղեցույցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (հետայսու՝ «Դատարան», «Եվրոպական դատարան» կամ «Ստրասբուրգի դատարան») կողմից հրատարակվող «Նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույցեր» (անգլ.՝ «Case-Law Guides») շարքից է՝ նախատեսված պրակտիկ իրավաբաններին Ստրասբուրգի դատարանի կայացրած հիմնարար վճիռների և որոշումների մասին տեղեկացնելու համար: Սույն ուղեցույցում վերլուծվում և ամփոփվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (հետայսու՝ «Կոնվենցիա» կամ «Եվրոպական կոնվենցիա») 3-րդ հոդվածի շուրջ ձևավորված նախադեպային իրավունքը: Ընթերցողները հնարավորություն կունենան ծանոթանալու տվյալ ոլորտի հիմնական սկզբունքներին և վերաբերելի նախադեպերին:

Մեջբերված նախադեպային իրավունքի օրինակներն ընտրվել են ուղենիշային, առավել կարևոր և/կամ վերջերս կայացված վճիռներից և որոշումներից:¹

Դատարանի վճիռներով և որոշումներով ոչ միայն լուծվում են Դատարանին ներկայացված կոնկրետ գործերը, այլև հետապնդվում է ավելի լայն նպատակ, այն է՝ Կոնվենցիայով սահմանված կանոնների պարզաբանումը, երաշխավորումը և զարգացումը, ինչը նպաստում է պետությունների՝ որպես Պայմանավորվող կողմերի ստանձնած հանձնառությունների կատարմանը (*Ireland v. the United Kingdom*, 1978, § 154, և *Jeronovičs v. Latvia* [GC], 2016, § 109):

Այսպիսով, Կոնվենցիայի միջոցով ստեղծված համակարգի նպատակն է լուծել հանրային քաղաքականության խնդիրները՝ ելնելով ընդհանուր շահերից, այդպիսի բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները և տարածելով մարդու իրավունքներին առնչվող իրավական պրակտիկան Կոնվենցիայի անդամ պետություններում (*Konstantin Markin v. Russia* [GC], 2012, § 89): Դատարանը հատուկ շեշտել է, որ Կոնվենցիան կատարում է «եվրոպական հասարակական կարգի սահմանադրական գործիքի» դերը մարդու իրավունքների բնագավառում (*Bosphorus Hava Yolları Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland* [GC], 2005, § 156, իսկ վերջերս նաև՝ *N.D. and N.T. v. Spain* [GC], 2020, § 110):

Կոնվենցիային կից թիվ 15 Արձանագրությունը վերջերս ներմուծեց սուբսիդիարության սկզբունքը Կոնվենցիայի նախաբանում: Սկզբունքը սահմանում է մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում «Մասնակից պետությունների և Դատարանի համատեղ պատասխանատվություն», իսկ ազգային իշխանությունները և դատարանները պարտավոր են այնպես մեկնաբանել և կիրառել ներպետական օրենսդրությունը, որ ապահովեն Կոնվենցիայում և դրան կից Արձանագրություններում սահմանված իրավունքների և ազատությունների լիարժեք իրագործումը (*Grzęda v. Poland* [GC], § 324):

Սույն ուղեցույցը պարունակում է հղումներ Կոնվենցիայից և վերջինիս Լրացուցիչ արձանագրություններից մեջբերված հոդվածներից յուրաքանչյուրում օգտագործված «բանալի» բառերին: Յուրաքանչյուր գործով քննարկված իրավական խնդիրներն ամփոփված են Բանալի բառերի ցանկում (անգլ.՝ «List of keywords»), որոնք ընտրվել են (հիմնականում) Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների տեքստից անմիջականորեն վերցված եզրույթների բառարանից:

Դատարանի նախադեպային իրավունքի *HUDOC database* շտեմարանում հնարավոր է որոնումներ կատարել ըստ բանալի բառերի: Բանալի բառերով որոնելու պարագայում կարելի է գտնել նմանաբնույթ իրավաբանական բովանդակություն ունեցող փաստաթղթերի խումբ (բանալի բառերի օգնությամբ ամբողջացվում են յուրաքանչյուր գործի վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները և եզրակացությունները): Առանձին գործերի բանալի բառերը

¹ Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակում մեջբերված գործերի վրա տրված գերկապային հղումները ուղղորդում են Դատարանի կայացրած վճիռների կամ որոշումների անգլերեն և ֆրանսերեն (Դատարանի երկու պաշտոնական լեզուներ) տեքստերին և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (հետայսու՝ Հանձնաժողով) որոշումներին կամ գեկույցներին: Եթե այլ բան նշված չէ, ապա բոլոր հղումները վերաբերում են Դատարանի պալատի կողմից ըստ էության կայացված վճիռն: Հայերեն թարգմանության մեջ «(որոշում)» կամ հղման անգլերեն տարբերակում (dec.) բառը նշանակում է, որ հղում է արվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը (հղման անգլերեն տարբերակում [GC]) նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից: Պալատի այն վճիռները, որոնք սույն թարմացումը հրապարակելու պահին դեռևս օրինական ուժի մեջ չեն մտել, նշագրված են աստղանիշով (*):

Կարելի է գտնել «HUDOC» համակարգում սեղմելով «Case Details» կոճակը: «HUDOC» շտեմարանի և բանալի բառերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար, տե՛ս «HUDOC»-ի օգտագործման ձեռնարկը (անգլ.՝ [«HUDOC user manual»](#)):

I. Ընդհանուր նկատառումներ

Ա. 3-րդ հոդվածի մեկնաբանությունը

1. Դատարանի մոտեցումը 3-րդ հոդվածի մեկնաբանությանը պետք է առաջնորդվի այն փաստով, որ Կոնվենցիայի՝ որպես առանձին անհատների պաշտպանության գործիքի, առարկան և նպատակը պահանջում են, որ դրա նորմերը մեկնաբանվեն և կիրառվեն այնպես, որ Կոնվենցիայի երաշխիքները դառնան գործնական և արդյունավետ: Երաշխավորված իրավունքների և ազատությունների ցանկացած մեկնաբանություն պետք է համահունչ լինի Կոնվենցիայի ընդհանուր ոգուն՝ գործիքի, որը մշակվել է ժողովրդավարական հասարակության գաղափարները և արժեքները պահպանելու և խրախուսելու համար (*Soering v. the United Kingdom*, 1989, § 87):

2. Կոնվենցիայի 3-րդ հոդվածն ամրագրում է ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքներից մեկը: Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը քաղաքակրթության արժեք է, որը սերտորեն փոխկապակցված է մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի հետ (*Bouyid v. Belgium* [GC], 2015, § 81): Տվյալ արգելքը բացարձակ է և, նույնիսկ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության կամ ամենադժվարին հանգամանքներում, օրինակ՝ ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կամ միգրանտների և ապաստան հայցողների ներհոսքի պարագայում, 15-րդ հոդվածի 2-րդ մասով չի թույլատրվում որևէ շեղում՝ անկախ խնդրո առարկա անձի վարքագծից (*A. and Others v. the United Kingdom* [GC], 2009, § 126; *Mocanu and Others v. Romania* [GC], 2014, § 315; *El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia* [GC], 2012, § 195 և *Z.A. and Others v. Russia* [GC], 2009, §§ 187-188) կամ նրան մեղսագրվող հանցագործության բնույթից (*Ramirez Sanchez v. France* [GC], 2006, § 116 և *Gäfgen v. Germany* [GC], 2010, § 87):

Բ. Պետության պարտավորությունները 3-րդ հոդվածի ներքո

3. 3-րդ հոդվածը սովորաբար կիրառվել է այն համատեքստերում, որտեղ վերաբերմունքի արգելված ձևը բխել է պետության ներկայացուցիչների կամ պետական մարմինների դիտավորությամբ կատարված արարքներից: Այն, ընդհանուր առմամբ, կարող է նկարագրվել որպես իր իրավագործության ներքո գտնվող անձանց լուրջ վնաս պատճառելուց զերծ մնալու պետության ուղղակի նեգատիվ պարտավորություն (*Hristozov and Others v. Bulgaria*, 2012, § 111):

4. Դատարանը, սակայն, հաշվի է առել նաև, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո պետություններն ունեն պոզիտիվ պարտավորություններ, որոնք, նախ պահանջում են ապահովել պաշտպանության նորմատիվ իրավական բազա, երկրորդ՝ որոշակի հստակ սահմանված հանգամանքներում այդ նորմը խախտող վերաբերմունքի վտանգից որոշ անհատների պաշտպանելու համար օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն, երրորդ՝ նման վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ հիմնավոր բողոքների մասով արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորություն: Ընդհանուր առմամբ, այս պոզիտիվ պարտավորություններից առաջին երկուսը դասակարգվում են որպես «նյութական», իսկ երրորդը համապատասխանում է պետության դատավարական պարտավորությանը (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 178):

Գ. 3-րդ հոդվածի շրջանակը

5. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված արգելքը չի վերաբերում վատ վերաբերմունքի բոլոր դեպքերին (*Savran v. Denmark*, [GC], 2021, § 122): Դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն 3-րդ հոդվածի կարգավորման դաշտում հայտնվելու համար վատ վերաբերմունքը պետք է հասնի դաժանության նվազագույն աստիճանի: Այդ աստիճանի գնահատումը հարաբերական է և պայմանավորված է գործի բոլոր փաստական

հանգամանքներով, ինչպես՝ այդ վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները, իսկ որոշ դեպքերում տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը (*Muršić v. Croatia* [GC], 2016, § 97):

6. Դաժանության աստիճանի հասնելու հարցը պարզելու համար կարող են նկատի առնվել այլ գործոններ, մասնավորապես. (ա) վատ վերաբերմունքի ենթարկելու նպատակը՝ դրա հիմքում ընկած մտադրության կամ դրդապատճառի համակցությամբ, թեև տուժողին նվաստացնելու կամ ստորացնելու մտադրության բացակայությունը չի կարող վերջնականորեն բացառել 3-րդ հոդվածի խախտում արձանագրելու հավանականությունը, (բ) վատ վերաբերմունքի դրսևորման համատեքստը, օրինակ՝ շատ լարված և հուզական մթնոլորտը, (գ) տուժողի՝ խոցելի վիճակում գտնվելու հանգամանքը (*Khlaifia and Others v. Italy* [GC], 2016, § 160):

7. Երբ գնահատվում է, թե արդյոք անձը ենթարկվել է վատ վերաբերմունքի, որը հասել է դաժանության նվազագույն աստիճանի, մասնավորապես, երբ այն դրսևորվել է մասնավոր անհատների կողմից, Դատարանը հաշվի է առնում մի շարք գործոններ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ունենալ զգալի կշիռ: Բոլոր այս գործոնները ենթադրում են, որ վերաբերմունքը, որին «ենթարկվել» է տուժողը դիտավորությամբ գործած արարքի հետևանքն է: Հետևաբար, մարմնական վնասվածքները, ֆիզիկական և հոգեկան տառապանքը, որոնք անհատը ստացել կամ վերապրել է պատահարի հետևանքով, որը պարզապես դիպվածի կամ անզգույշ վարքի արդյունք է, չեն կարող համարվել 3-րդ հոդվածի իմաստով այն «վերաբերմունքի» հետևանք, որին «ենթարկվել» է տվյալ անհատը (*Nicolae Virgiliu Tănase v. Romania* [GC], 2019, §§ 121 և 123):

8. Սակայն, երբ անհատը զրկված է ազատությունից կամ, ընդհանրապես, առերեսվում է իրավապահ մարմինների աշխատակիցների հետ՝ վերջիններիս կողմից որևէ արարք անհատի նկատմամբ, որը համարվում է մարդկային արժանապատվությունը նվաստացնող, հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (*Bouyid v. Belgium* [GC], 2015, §§ 100-101):

Գ. Արգելված վերաբերմունքի կամ պատժի տեսակները

1. Խոշտանգում

9. Խոշտանգման արգելքը ստացել է *jus cogens* կամ միջազգային իրավունքի իմպերատիվ նորմի կարգավիճակ (*Advisory opinion on the applicability of statutes of limitation to prosecution, conviction and punishment in respect of an offence constituting, in substance, an act of torture* [GC], § 59, 2022): Պարզելու համար, թե արդյոք վատ վերաբերմունքի կոնկրետ ձևը պետք է որակել որպես խոշտանգում, Դատարանը հաշվի է առնում այս հասկացության և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի միջև 3-րդ հոդվածում ամրագրված տարբերակումը: Մտադրությունն այն էր, որ այս տարբերակման միջոցով Կոնվենցիան պետք է հատուկ խարան կցեր դիտավորությամբ անմարդկային վերաբերմունքին, որը պատճառում է ծանր և դաժան տառապանք: Նույն տարբերակումն ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայում (ՄԱԿԽԴԿ, անգլ.՝ UNCAT) (*Ireland v. the United Kingdom*, 1978, § 167, *Selmouni v. France* [GC], 1999, § 96 և *Ilaşcu and Others v. Moldova and Russia* [GC], 2004, § 426):

10. Ի հավելումն վերաբերմունքի դաժանության, կա նաև ՄԱԿԽԴԿ-ում ընդունված նպատակաուղղվածության տարրը, որը սահմանում է խոշտանգումը դիտավորությամբ ուժեղ ցավ կամ տառապանք պատճառելու իմաստով՝ *inter alia*, տեղեկություններ կամ խոստովանություն ստանալու, պատժելու կամ ահաբեկելու նպատակով (*Selmouni v. France* [GC], 1999, § 97; *Salman v. Turkey* [GC], 2000, § 114; *Al Nashiri v. Poland*, 2014, § 508 և *Petrosyan v. Azerbaijan*, 2021, § 68):

11. Հաշվի առնելով այն փաստը, որ Կոնվենցիան կենդանի գործիք է, որը պետք է մեկնաբանվի գոյություն ունեցող պայմանների լույսի ներքո՝ արարքները, որոնք նախկինում որակվել են ոչ թե որպես «խոշտանգում», այլ «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք», կարող են

ապագայում ստանալ այլ որակում: Դատարանը հարել է այն տեսակետին, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում պահանջվող հարաճուն ավելի բարձր չափանիշը համապատասխանաբար և անխուսափելիորեն պահանջում է ավելի մեծ հաստատակամություն ժողովրդավարական հասարակություններում հիմնարար արժեքների խախտումները գնահատելու հարցում (*Selmouni v. France* [GC], 1999, § 101):

12. Այս առնչությամբ Դատարանը շեշտել է, որ խոշտանգման արգելքը ստացել է *jus cogens* կամ միջազգային իրավունքի իմպերատիվ նորմի կարգավիճակ:

13. Օրինակ, վերաբերմունքը համարվել է «խոշտանգում», երբ.

- խոստովանություն կորզելու նպատակով ոստիկանությունում արգելանքի տակ պահվելու ընթացքում պետության ներկայացուցիչները մերկացրել էին զանգատաբերին, կապել ձեռքերը մեջքի ետևում և կախել նրան ձեռքերից («պաղեստինյան կախվածք») (*Aksoy v. Turkey*, 1996, § 64),
- արգելանքի տակ պահվելու ընթացքում զանգատաբերին բռնաբարել էին և ենթարկել ֆիզիկական և հոգեբանական վատ վերաբերմունքի այլ գործողությունների (*Aydin v. Turkey*, 1997, §§ 83-87, տե՛ս նաև *Maslova and Nalbandov v. Russia*, 2008, § 108, երբ հարցաքննության ընթացքում զանգատաբերին մի քանի անգամ բռնաբարել էին և ենթարկել մի շարք ֆիզիկական բռնարարների և *Zontul v. Greece*, 2012, § 92, երբ առափնյա պահակախմբի անդամներից մեկը բռնաբարել էր իր հսկողությանը հանձնված ապօրինի միգրանտի),
- խոստովանություն կորզելու համար արգելանքի տակ պահվելու ընթացքում զանգատաբերներին մի քանի օր գրկել էին քնից, ենթարկել «պաղեստինյան կախվածքի» և «ֆալաբայի», ջուր ցանել նրանց վրա, ենթարկել ծեծի (*Bati and Others v. Turkey*, 2004, § 110 և §§ 122-124),
- զանգատաբերին, ով հացադուլի մեջ գտնվող ազատությունից զրկված անձ էր, հարկադրաբար կերակրել էին, թեև չկար դրա բժշկական անհրաժեշտությունը, ձեռնաշղթաների, բերանը լայնացնող սարքի, կերակրափողում տեղադրված հատուկ ռետինե խողովակի օգնությամբ, իսկ դիմադրության դեպքում՝ ուժ կիրառելով (*Nevmerzhitsky v. Ukraine*, 2005, § 98),
- «արտակարգ միջոցառման» շրջանակում, որի նպատակն էր զանգատաբերից տեղեկություններ ստանալը կամ նրան պատժելը կամ ահաբեկելը, զանգատաբերի նկատմամբ կիրառվել էին համակցված և կանխամտածված միջոցներ, այդ թվում՝ ձեռնաշղթաներ և գլխանոց հագցնելը, հարկադրաբար մերկացնելը, հատակին պահելով առանց բժշկական անհրաժեշտության ռեկտալ մոմիկ դնելը (*El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia* [GC], 2012, § 205),
- զանգատաբերների ազգականը մահացել էր ոստիկանության աշխատակիցների դաժան ծեծի հետևանքով (*Satybalova and Others v. Russia*, 2020, § 76; տե՛ս նաև *Lutsenko and Verbytsky v. Ukraine*, 2021, §§ 79-80, երբ Մայդանի բողոքի ակցիաների համատեքստում ոստիկանության կողմից վարձված մասնավոր գործակալները ծեծելով սպանել էին այրն. Վերբիցկուն):

14. Դատարանը վճռել է, որ վարքի որոշակի տեսակներ, օրինակ՝ պետության ներկայացուցչի կողմից ազատությունից զրկված անձի բռնաբարությունը, պետք է համարվի վատ վերաբերմունքի առանձնակի ծանր և նողկալի ձև, հաշվի առնելով այն փաստը, որ հանցագործը կարող է հեշտությամբ օգտվել տուժողի խոցելիությունից և նրա թույլ դիմադրությունից: Ավելին, բռնաբարությունը խորը հոգեբանական սպիներ է թողնում տուժողների վրա, որոնք ժամանակը չի բուժում այնքան արագ, որքան ֆիզիկական և հոգեկան բռնության այլ ձևերը: Տուժողը ենթարկվում է նաև բռնի ներթափանցման սուր ֆիզիկական ցավի, որը թողնում է ֆիզիկական և հուզական նվաստացման և բռնության զգացում (*Maslova and Nalbandov v. Russia*, 2008, § 105):

15. Դատարանը չի բացառել, որ խոշտանգման սպառնալիքը նույնպես կարող է համարվել խոշտանգում, քանի որ խոշտանգման բնույթը ներառում է թե՛ ֆիզիկական ցավը, թե՛ հոգեկան տառապանքը: Մասնավորապես, որոշակի հանգամանքներում ֆիզիկական խոշտանգման

վախը կարող է ինքնին հանդիսանալ հոգեբանական խոշտանգում: Դատարանը, սակայն, ընդգծել է, որ խնդրո առարկա ֆիզիկական խոշտանգման սպառնալիքի որակումը որպես հոգեբանական խոշտանգում կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կախված է կոնկրետ գործի բոլոր հանգամանքներից, հատկապես՝ գործադրված ճնշման և պատճառված հոգեկան տառապանքի ուժգնությունից (*Gäfgen v. Germany* [GC], 2010, § 108):

16. *Tunikova and Others v. Russia*, 2021, գործով զանգատաբերները խնդրել են Դատարանին վճռել, որ ոչ պետական դերակատարների դրսևորած վատ վերաբերմունքը նույնպես հանդիսացել է «խոշտանգում»: Թեև Դատարանն ընդունել է, որ նմանօրինակ լրացուցիչ բնութագրումը կարող է կարևոր լինել զանգատաբերների համար և ազդել ընտանեկան բռնության հասարակական ընկալման վրա, այն համարել է, որ տվյալ գործի հանգամանքներից ելնելով դրա անհրաժեշտությունը չկա, չնայած կասկածից վեր էր, որ զանգատաբերները ենթարկվել էին դաժանության պահանջվող աստիճանը հատող վերաբերմունքի, որն ընկնում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի կարգավորման տակ (§ 77):

2. Անմարդկային վերաբերմունք կամ պատիժ

17. Խոշտանգման, անմարդկային վերաբերմունքի կամ պատիժի և նվաստացնող վերաբերմունքի կամ պատիժի միջև տարբերակումը սկզբունքորեն բխում է պատճառված տառապանքի ուժգնության տարբերությունից (*Ireland v. the United Kingdom*, 1978, § 167): Դատարանը վերաբերմունքը կամ պատիժը համարել է «անմարդկային» քանի որ, *inter alia*, այն եղել է կանխամտածված, տևել է ժամեր և պատճառել է փաստացի մարմնական վնասվածքներ կամ ուժգին ֆիզիկական և հոգեկան տառապանք (*Labita v. Italy* [GC], 2000, § 120 և *Kudla v. Poland* [GC], 2000, § 92):

18. Օրինակ, վերաբերմունքը կամ պատիժը համարվել է «անմարդկային», երբ.

- Ոստիկանությունում արգելանքի տակ պահվելու ընթացքում զանգատաբերին սպառնացել են խոշտանգել (*Gäfgen v. Germany* [GC], 2010, §§ 91 և 101-108; տե՛ս նաև *Al-Saadoon and Mufdhi v. the United Kingdom*, 2010, §§ 137 և 144, երբ զանգատաբերին վախեցրել են օտարերկրյա իշխանությունների մահապատժով և *Al Nashiri v. Romania*, 2018, § 675, երբ զանգատաբերը, ով նախապես ենթարկվել էր վատ վերաբերմունքի, գտնվել է պահման ծանր պայմաններում՝ լրիվ մեկուսի և խոշտանգման ենթարկվելու հեռանկարով),
- անվտանգության ծառայությունները դիտավորությամբ ոչնչացրել են զանգատաբերների տները և գույքը՝ գրկելով նրանց սպրոստից և հարկադրելով լքել իրենց գյուղը (*Selçuk and Asker v. Turkey*, 1998, § 77; *Hasan İlhan v. Turkey*, 2004, § 108),
- իր ազգականի անհետացման պատճառով զանգատաբերը տևական և շարունակական ժամանակ տառապել է անորոշության և մտավախությունների պատճառով (*Orhan v. Turkey*, 2002, § 360; տե՛ս նաև *Musayev and Others v. Russia*, 2007, § 169, երբ զանգատաբերը դարձել է իր մի քանի ազգականների և հարևանների կամայական՝ առանց դատավճռի մահապատժի և իրադարձություններից հետո իշխանությունների ոչ համարժեք ու անարդյունավետ արձագանքի վկան),
- զանգատաբերին, ով առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկ էր, որպես պատիժ ստիպել էին կատարել չափազանց ծանր ֆիզիկական վարժություններ (*Chember v. Russia*, 2008, § 57),
- զանգատաբերը տևական ժամանակ իր նկատմամբ նշանակված ցմահ ազատազրկման պատիժը կրում էր պահման անմխիթար և շատ խիստ ռեժիմի պայմաններում (*Simeonovi v. Bulgaria* [GC], 2017, § 90):

3. Նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ

19. Վերաբերմունքը համարվում է «նվաստացնող», երբ այն նսեմացնում կամ ստորացնում է անհատին, ցուցադրելով հարգանքի բացակայություն նրա մարդկային արժանապատվության նկատմամբ կամ նսեմացնելով նրա մարդկային արժանապատվությունը, կամ առաջացնում է վախի, տառապանքի կամ թերաթժեքության զգացում, որը կարող է կոտրել անհատի

բարոյական և ֆիզիկական դիմադրությունը: Բավարար կարող է համարվել տուժողի նսեմացումը, եթե ոչ ուրիշների, ապա իր սեփական աչքերում: Ավելին, թեև այն հարցը, թե արդյոք վերաբերմունքի նպատակը եղել է տուժողին նսեմացնելը կամ ստորացնելը կարևոր գործոն է, որը պետք է հաշվի առնել, նման նպատակի բացակայությունը չի կարող վերջնականորեն բացառել 3-րդ հոդվածի խախտման արձանագրումը (*Gäfgen v. Germany* [GC], 2010, § 89; *Ilaşcu and Others v. Moldova and Russia* [GC], 2004, § 425; *M.S.S. v. Belgium and Greece* [GC], 2011, § 220):

20. Որպեսզի պատիժը լինի «նվաստացնող» և խախտի 3-րդ հոդվածը, պատճառած նսեմացումը կամ ստորացումը պետք է հասնի որոշակի աստիճանի: Գնահատումը, ախուսափելիորեն, հարաբերական է՝ այն կախյալ է գործի բոլոր հանգամանքներից և, մասնավորապես, բուն պատժի բնույթից և համատեքստից, դրա կիրառման եղանակից և մեթոդից (*Tyrer v. the United Kingdom*, 1978, § 30): Պատիժը չի կորցնում իր նվաստացնող բնույթը միայն այն պատճառով, որ համարվում է կամ փաստացի հանդիսանում է հանցավորության դեմ պայքարում կանխարգելիչ կամ օգնության արդյունավետ միջոց և երբեք չի թույլատրվում դիմել պատիժների, որոնք հակասում են 3-րդ հոդվածին, ինչպիսին էլ լինի դրանց կանխարգելիչ ազդեցությունը (*Tyrer v. the United Kingdom*, 1978, § 31):

21. Այս առնչությամբ Դատարանը շեշտել է, որ գոյություն ունի ակնհայտ կապ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով «նվաստացնող» վերաբերմունքի կամ պատժի և «արժանապատվության» նկատմամբ հարգանքի միջև (*Bouyid v. Belgium* [GC], 2015, § 90):

22. Օրինակ, վերաբերմունքը կամ պատիժը համարվել է «նվաստացնող», երբ.

- ծանր հաշմանդամություն ունեցող ազատությունից զրկված անձին պահել են անհամապատասխան պայմաններում, որտեղ վտանգավոր աստիճանի ցուրտ էր իր համար, կար պառկելախոցների առաջացման վտանգ, քանի որ մահճակալը շատ չոր էր կամ անհասանելի, նա չափազանց մեծ դժվարությամբ էր կարող օգտվել զուգարանից կամ պահպանել մաքրություն (*Price v. the United Kingdom*, 2001, § 30; տե՛ս նաև *Vincent v. France*, 2006, §§ 101-103, երբ զանգատաբերը, ով անդամալույծ էր, չէր կարող ինքնուրույն դուրս գալ իր խցից կամ տեղաշարժվել բանտի տարածքում),
- բանտի վարչակազմը բռնի սափրել էր զանգատաբերների մազերն առանց որևէ հիմնավորման կամ իրավական հիմքերի (*Yankov v. Bulgaria*, 2003, §§ 120-121; տե՛ս նաև *Slyusarev v. Russia*, 2010, § 44, երբ ձերբակալությունից հետո առանց որևէ հիմնավորման կամ իրավական հիմքերի հինգ ամսով առգրավել էին զանգատաբերի ակնոցը),
- առանց չափահասի ուղեկցության օտարերկրյա անչափահաս անձը ստիպված էր ապրել ետնախորշերում՝ վտանգավոր պայմաններում, քանի որ իշխանությունները չէին կատարել տեղավորման մասին դատական որոշումը (*Khan v. France*, 2019, §§ 94-95),
- զանգատաբերների տան խուզարկության ընթացքում չկար ուժի կիրառման ծայրահեղ անհրաժեշտություն (*Ilievi and Ganchevi v. Bulgaria*, 2021, §§ 56-57),
- զանգատաբերի նկատմամբ դատարանի որոշմամբ կիրառվել է ֆիզիկական պատիժ (*Tyrer v. United Kingdom*, 1978, § 35),
- իշխանությունները չէին ապահովել, որ տասներու տարեկան երեխան, ով իր ծնողների ձերբակալման վկան էր դարձել, գտնվի չափահասի հսկողության տակ և տեղեկացվի իրավիճակի մասին, մինչ ծնողները պահվում էին արգելանքի տակ ոստիկանությունում (*Ioan Pop and Others v. Romania*, 2016, § 65),
- զանգատաբերը երկար ժամանակ պահվել էր բանտում ծայրաստիճան գերբնակեցված և հակասանիտարական միջավայրում (*Kalashnikov v. Russia*, 2002, § 102),
- զանգատաբերին ոչ պատշաճ եղանակով, օրինակ՝ նվաստացնող արտահայտություն անելով, ենթարկել էին մերկացմամբ զուգորդվող անձնական խուզարկության (*Iwańczuk v. Poland*, 2001, § 59; տե՛ս նաև *Valašinas v. Lithuania*, 2001, § 117, երբ զանգատաբերին մերկացրել էին կանանց բանտի աշխատակցի առջև և բանտի

հսկիչներն առանց ձեռնոցների գննել էին նրա սեռական օրգանները և նրա ստացած սնունդը),

- ապաստան հայցողին երեք ամիս պահել էին ոստիկանության բաժնում անազատության մեջ, սպասելով վարչական միջոցի կիրառման՝ առանց ազատ ժամանցի հնարավորության և պատշաճ սննդի (*Tabesh v. Greece*, 2009, § 38-44, տե՛ս նաև *Z.A. and Others v. Russia* [GC], 2019, § 195, երբ, ապաստանի հայցի քննության ընթացքում, զանգատարեւները պահվում էին անազատության մեջ օդանավակայանի տարանցիկ գոտում ոչ համարժեք պայմաններում, որոնք հարմարեցված չէին երկարատև կացության համար, նաև *N.H. and Others v. France*, 2020, § 184, երբ ապաստան հայցողները չքավորության մեջ էին և մի քանի ամիս ծանր կյանքով էին ապրել վարչական ձգձգումների պատճառով, որոնք թույլ չէին տալիս նրանց ստանալ օրենքով նախատեսված օգնությունը),
- ԼԳԲՏԻ քսանյոթ ակտիվիստներ ենթարկվել էին հակընդդեմ ցույցի մասնակից ամբոխի բանավոր դաժան բռնությանը և անկանոն ֆիզիկական հարձակումներին, իսկ ոստիկանության խոստացված պաշտպանությունը չէր տրամադրվել ժամանակին կամ համարժեք չափով (*Women's Initiatives Supporting Group and Others v. Georgia*, 2021 § 60; տե՛ս նաև *Oganezova v. Armenia*, 2022, § 97, երբ հեռուստատեսային հարցազրույցից հետո զանգատարեւը, ով ԼԳԲՏԻ համայնքի հայտնի անդամ էր, դարձել էր շարունակական և ագրեսիվ հոմոֆոբ քարոզարշավի թիրախ, այդ թվում՝ հրկիզել էին նրա ակումբը, նա ստացել էր մահվան սպառնալիքներ և ենթարկվել ամբոխի ֆիզիկական հարձակման և ատելության խոսքի),
- բուժաշխատողների կողմից գենետիկական թեստերի ուշացման արդյունքում, զանգատարեւը, ով հղի էր, ստիպված է եղել վեց շաբաթ դիմանալ ցավոտ անորոշությանը, որը կապված էր իր պտղի առողջության հետ, իսկ երբ վերջապես ստացել էր թեստերի արդյունքները, արդեն ուշ էր հղիությունը պահպանելու կամ հղիությունն օրինական կարգով ընդհատելու վերաբերյալ իրագրված որոշում կայացնելու համար (*R.R. v. Poland*, 2011, § 159),
- հարկադիր վտարման համատեքստում զանգատարեւը ձեռնաշղթաներ էր կրել մոտ 20 ժամ ավտորուսով տեղափոխվելու ընթացքում (*Akkad v. Türkiye*, 2022, § 115),
- բանտարկյալներն առանձնացվել և այլ բանտարկյալներից մեկուսացվել էին, նսեմացվել և բռնության էին ենթարկվել իրենց խցակիցների կողմից՝ պայմանավորված բանտային ոչ ֆորմալ աստիճանակարգված հարաբերություններում իրենց ստորադաս կարգավիճակով («վտարակներ»): Խարանագույնը, նվաստացուցիչ աշխատանք հանձնարարելը և հիմնական կարիքները չբավարարելը, որոնք կյանքի էին կոչվել բռնության սպառնալիքներով, տևել էին տարիներ (*S.P. and Others v. Russia*, 2023, §§ 92-96):

Ե. Կապը Կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածների միջև

23. Գոյություն ունեն որոշակի իրավիճակներ, երբ վերաբերմունքը, որի դեմ բողոք է բերել զանգատարեւը, կարող է հանդիսանալ Կոնվենցիայի երկու կամ ավելի հոդվածների կարգավորման առարկա: Նման դեպքերում, ելնելով հանգամանքներից, Դատարանը կարող է քննել զանգատը յուրաքանչյուր նորմի յույսի ներքո առանձին (տե՛ս, օրինակ, *Mubilanzila Mayeka and Kaniki Mitunga v. Belgium*, 2006; և *D.P. and J.C. v. the United Kingdom*, 2002) կամ դրանց համակցությամբ (տե՛ս, օրինակ, *M.C. v. Bulgaria*, 2003): Դատարանը կարող է նաև ավելորդ համարել նույն զանգատի քննությունը 8-րդ հոդվածի համաձայն, եթե արձանագրի Կոնվենցիայի 2-րդ կամ 3-րդ հոդվածի խախտում (տե՛ս, օրինակ, *Öneryıldız v. Turkey* [GC], 2004; և *Z and Others v. the United Kingdom* [GC], 2001):

24. Սկզբունքորեն, երբ անձը ենթարկվում է պետության ներկայացուցիչների հարձակման կամ վատ վերաբերմունքի, նրա զանգատը քննվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի յույսի ներքո (*Makaratzis v. Greece* [GC], 2004, § 51; *İlhan v. Turkey* [GC], 2000, § 76): Բացառիկ հանգամանքներում, սակայն, ելնելով այնպիսի նկատառումներից, ինչպիսիք են գործադրած ուժի չափը և տեսակը, ինչպես նաև վնասվածքների բնույթը, պետության ներկայացուցիչների

ուժի գործադրումը, որը չի հանգեցրել մահվան, կարող է հանդիսանալ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, եթե պետության ներկայացուցիչների վարքը, իր բնույթով, լուրջ վտանգի է ենթարկել զանգատաբերի կյանքը՝ չնայած որ վերջինս ողջ է մնացել (*Makaratzis v. Greece* [GC], 2004, § 55; *Soare and Others v. Romania*, 2011, §§ 108-109; և *Trévalet v. Belgium*, 2011, §§ 55-61):

25. Ոչ պետական սուբյեկտների հնարավոր մահացու հարձակումը վերապրած զանգատաբերների գործերով Դատարանը որդեգրել է մոտեցում, որը նման է պետության ներկայացուցիչների կողմից ուժի գործադրման գործերի առնչությամբ ունեցած մոտեցմանը (*Yotova v. Bulgaria*, 2012, § 69):

26. Ավելին, երբ վերաբերմունքը չի հասնում 3-րդ հոդվածում նկարագրած վերաբերմունքի աստիճանին, այն կարող է, այնուամենայնիվ, հակասել 8-րդ հոդվածին, որը, *inter alia*, պաշտպանում է անձի ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը, անձնական կյանքը հարգելու իրավունքի տարրերը (*Wainwright v. the United Kingdom*, 2006, § 43):

27. Դատարանը, օրինակ, արձանագրել է, որ 3-րդ հոդվածով սահմանված դաժանության նվազագույն աստիճանի չհասած վերաբերմունքը խախտել է 8-րդ հոդվածը, երբ.

- զինվորական անձնակազմի ներկայացուցիչները քննության են ենթարկվել և հեռացվել ծառայությունից իրենց սեռական կողմնորոշման համար (*Smith and Grady v. the United Kingdom*, 1999, §§ 117-123),
- զանգատաբերի տանը մոտ գտնվող թափոնների մշակման գործարանը վնաս էր պատճառել (*López Ostra v. Spain*, 1994, §§ 58-60),
- բանտում այցելուների մերկացմամբ զուգորդվող անձնական զննության ընթացքում բանտային ծառայողներն անքաղաքավար են վարվել, թեև բանավոր վիրավորանքներ կամ ֆիզիկական կոնտակտ չի եղել (*Wainwright v. the United Kingdom*, 2006, §§ 44-49),
- իշխանությունների կողմից թափառող շների դեմ համարժեք միջոցներ չձեռնարկելու հետևանքով զանգատաբերը ենթարկվել էր թափառող շների ոհմակի հարձակման (*Georgel and Georgeta Stoicescu v. Romania*, 2011, § 45):

II. Պետության ներկայացուցիչների կողմից կամ նրանց օժանդակությամբ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը

Կոնվենցիայի 3-րդ հոդված

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ա. Նախնական դիտարկումներ

28. Կոնվենցիայի շրջանակներում Պայմանավորվող կողմը պատասխանատվություն է կրում իրենց ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում իր ներկայացուցիչների գործողությունների հետևանքով առաջացած մարդու իրավունքների խախտումների համար: Դատարանը վճռել է, որ երբ պետության ներկայացուցիչ վարքն անօրինական է, այն հարցը, թե արդյոք վիճարկվող արարքները կարող են մեղսագրվել պետությանը, պահանջում է գնահատել հանգամանքների ամբողջությունը և նկատի առնել խնդրո առարկա վարքի բնույթը և հանգամանքները: Ավելին, թե արդյոք անձը Կոնվենցիայի իմաստով հանդիսանում է պետության ներկայացուցիչ սահմանվում է բազմաթիվ գործոնների հիման վրա, որոնցից ոչ մեկն առանձին վերցված որոշիչ չէ: Առանցքային չափորոշիչները, որոնք կիրառվում են անձի՝ անկախ ֆորմայ առումով նրա պաշտոնատար անձ հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքից, գործողությունների մասով պետության պատասխանատվությունը պարզելու համար հետևյալն են. խնդրո առարկա անձի նշանակման կարգը, վերահսկողությունը և հաշվետվողականությունը, նպատակները, լիազորությունները և գործառնությունները (*V.K. v. Russia*, 2017, § 174):

29. Վերոնշյալի հետ կապված, Պայմանավորվող կողմի իշխանությունների համաձայնությունը կամ մասնակցությունը մասնավոր անհատների գործողություններին, որոնք խախտում են այլ անձանց կոնվենցիոն իրավունքներն իրենց իրավագործության սահմաններում, կարող է առաջացնել տվյալ պետության պատասխանատվությունը Կոնվենցիայի ներքո (*Chernega and Others v. Ukraine*, 2019, § 127):

Բ. Ապացույցների գնահատում

30. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտումների գործերով ապացույցները գնահատելիս Դատարանը պարտավոր է իրականացնել առանձնակի մանրամասն քննություն: Եթե եղել է ներպետական վարույթ, Դատարանի խնդիրը չէ փոխարինել ներպետական դատարանների կողմից փաստերի գնահատումն իր սեփականով, քանի որ, որպես կանոն, ներպետական դատարանները պետք է գնահատեն իրենց ներկայացված ապացույցները: Թեև 3-րդ հոդվածին առնչվող գործերով Դատարանը պատրաստ է ավելի քննական մոտեցում ցուցաբերել ներպետական դատարանների եզրակացություններին՝ սովորական հանգամանքներում փաստերի վերաբերյալ այդ դատարանների եզրակացություններից շեղվելու համար պահանջվում են համոզիչ փաստարկներ (*Cestaro v. Italy*, 2015, § 164 և դրանում մեջբերված գործերը):

31. Այն դեպքերում, երբ առկա են իրադարձությունների իրար հակասող վարկածներ, փաստերը պարզելիս Դատարանն անխուսափելիորեն առերեսվում է նույն դժվարություններին, ինչ առաջին ատյանի դատարանը: Կոնվենցիայի 19-րդ հոդվածով սահմանված իր գործառնության առանձնահատկությունը, որն է երաշխավորել Կոնվենցիայով ամրագրված հիմնարար իրավունքների ապահովման ոլորտում Պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, պայմանավորում է Դատարանի մոտեցումը

ապացույցների և ապացուցման խնդիրներին (*El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia* [GC], 2012, § 151):

1. Ապացուցման չափանիշ

32. 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի մասին մեղադրանքները պետք է հիմնավորվեն պատշաճ ապացույցներով: Այդ ապացույցները զնահատելու համար Դատարանը որդեգրում է «ողջամիտ կասկածից վեր» ապացուցման չափանիշ, սակայն հավելում, որ նման ապացույցները կարող են բխել բավականաչափ համոզիչ, հստակ և ներդաշնակ եզրակացությունների համակցությունից կամ նմանատիպ անհերքելի փաստի կանխավարկածից (*Salman v. Turkey* [GC], 2000, § 100; *Bouyid v. Belgium* [GC], 2015, § 82):

2. Ապացուցման բեռ

33. Համոզվածության աստիճանը, որն անհրաժեշտ է կոնկրետ եզրակացության հանգելու համար, և դրան առնչվող ապացուցման բեռի բաշխումն անբավարար են կասկած են փաստերի որոշակիության, ներկայացված մեղադրանքի բնույթի և Կոնվենցիայի խնդրո առարկա իրավունքի հետ (*El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia* [GC], 2012, § 151):

34. Կոնվենցիայի հիման վրա նախաձեռնված վարույթները ոչ բոլոր դեպքերում են հետևում *affirmanti incumbit probatio* (մեղադրողը պետք է ապացուցի մեղադրանքը) սկզբունքի խիստ կիրառմանը (*Blokhin v. Russia* [GC], 2016, § 140): Երբ խնդրո առարկա իրադարձություններն ամբողջությամբ կամ մեծ մասամբ իշխանությունների բացառիկ իրավասության շրջանակում են, ինչպես իրենց հսկողության տակ գտնվող արգելանքի վերցված անձանց դեպքում, նման ազատագրկման ընթացքում առաջացած վնասվածքների առնչությամբ կառաջանան լուրջ փաստական կանխավարկածներ: Այս պարագայում ապացուցման բեռը կրում է կառավարությունը, որը պետք է տա բավարար և համոզիչ բացատրություն՝ ներկայացնելով փաստեր բացահայտող ապացույցներ, որոնք կասկածի տակ են դնում տուժողի ներկայացրած իրադարձությունների շարադրանքը (*Salman v. Turkey* [GC], 2000, § 100): Նման բացատրության բացակայության դեպքում Դատարանը կարող է հանգել կառավարության համար անբարենպաստ եզրակացության (*Bouyid v. Belgium* [GC], 2015, § 83):

35. Վերոնշյալ սկզբունքը կիրառելի է բոլոր այն դեպքերի նկատմամբ, որոնց պարագայում անձը գտնվել է ոստիկանության կամ նմանօրինակ մարմնի հսկողության տակ (*Bouyid v. Belgium* [GC], 2015, § 84):

Գ. Պետության ներկայացուցիչների կողմից ուժի գործադրում

1. Ընդհանուր նկատառումներ

36. Վերոնշյալի համաձայն, երբ անհատը զրկված է ազատությունից կամ, ընդհանրապես, առերեսվում է իրավապահների հետ, ֆիզիկական ուժի ցանկացած գործադրում, որի ծայրահեղ անհրաժեշտությունը պայմանավորված չի եղել անձի վարքով, նսեմացնում է մարդու արժանապատվությունը և, սկզբունքորեն, խախտում Կոնվենցիայի 3-րդ հոդվածում սահմանված իրավունքը: Այս առնչությամբ Դատարանը շեշտել է, որ «սկզբունքորեն» բառը չի նշանակում, որ կարող են լինել իրավիճակներ, որոնց դեպքում նման խախտման ճանաչումը չի պահանջվում, քանի որ չի հատվել դաժանության շեմը: Մարդու արժանապատվության նկատմամբ յուրաքանչյուր միջամտություն հարվածում է Կոնվենցիայի բուն էությանը: Այդ պատճառով, անհատի դեմ իրավապահների ցանկացած գործողություն, որը նսեմացնում է մարդու արժանապատվությունը, հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Մասնավորապես, դա կիրառելի է իրավապահների կողմից անհատի նկատմամբ ուժի գործադրման դեպքում, որի ծայրահեղ անհրաժեշտությունը պայմանավորված չի եղել նրա վարքով՝ խնդրո առարկա անձի վրա դրա ունեցած ազդեցությունից անկախ (*Bouyid v. Belgium* [GC], 2015, §§ 100-101):

37. Դատարանը նաև շեշտել է, որ 3-րդ հոդվածը չի արգելում որոշակի հատակ սահմանված հանգամանքներում, օրինակ՝ ձերբակալման նպատակով, ուժի գործադրումը պետության ներկայացուցիչների կողմից: Այդուհանդերձ, նման ուժ կարող է գործադրվել միայն, եթե անհրաժեշտ է, և այն չպետք է լինի անհամաչափ (*Necdet Bulut v. Turkey*, 2007, § 23; *Shmorgunov and Others v. Ukraine*, 2021, § 359): Այս իմաստով, կարևոր է, օրինակ, թե արդյոք եղել է հիմք հավատալու, որ խնդրո առարկա անձը ձերբակալության ընթացքում ցույց կտա դիմադրություն կամ կոխմի փախուստի, կհասցնի վնասվածքներ կամ կպատճառի վնաս, կամ կթաքցնի սպացույցներ (*Mafalani v. Croatia*, 2015, § 120 և դրանում մեջբերված գործերը):

38. Օրինակ, Դատարանը գտել է, որ ոստիկանության կիրառած մեթոդները, այդ թվում՝ ինքնությունը պարզելու ընթացքում գանգատաբերին վերահսկելու համար մահակներ գործադրելը, եղել է անհամաչափ՝ հաշվի առնելով, որ գանգատաբերը եղել է անզեն և մինչև գետնին անշարժացնելը հիմնականում իրեն հանգիստ է պահել, թեև հարվածել է ոստիկանության աշխատակիցներից մեկին (*Dembele v. Switzerland*, 2013, § 47; տե՛ս նաև *A.P. v. Slovakia*, 2020, § 62, որտեղ գանգատաբերը թքել է ոստիկանների վրա և փորձել հարվածել նրանց):

39. Միաժամանակ, Դատարանը գտել է, որ ուժի գործադրումը գանգատաբերների՝ բողոքի դերների նկատմամբ, ովքեր ձերբակալության ընթացքում դիմադրել են ոստիկաններին և հարձակվել նրանց վրա, անհրաժեշտ է եղել նրանց վարքից ելնելով (*Berliński v. Poland*, 2002, § 62, տե՛ս նաև *Barta v. Hungary*, 2007, § 72, որտեղ գանգատաբերը ձերբակալության ժամանակ վնասվածքներ է ստացել, երբ խանգարել է ոստիկանին և *P.M. and F.F. v. France*, 2021, § 88, որտեղ գանգատաբերները, ովքեր գտնվել են արբած վիճակում, վնասվածքներ են ստացել մասնավոր գույքը վնասելու հանցագործության համար ձերբակալության ընթացքում):

40. Ավելին, իրավաչափ նպատակներ հետապնդող ոստիկանական գործողության համատեքստում, օրինակ՝ ձերբակալություն, խուզարկություն և առարկաների առգրավում, հանցագործությունների քրեական հետապնդման հանրօգուտ նպատակ, Դատարանը նախկինում գտել է, որ ձերբակալության վայրում ընտանիքի անդամների, մասնավորապես՝ երեխաների ներկայությունը, ում մանկահասակությունը դարձնում է նրանց հոգեբանորեն խոցելի, գործոն է, որը պետք է նկատի առնել տվյալ գործողությունը պլանավորելու և իրականացնելու ընթացքում (*Gutsanovi v. Bulgaria*, 2013, § 132): *Gutsanovi v. Bulgaria*, 2013, գործով Դատարանն արձանագրեց, որ այն փաստը, որ ոստիկանության գործողությունը տեղի էր ունեցել վաղ առավոտյան և դրան մասնակցել էին դիմակավոր հատուկ գործակալներ, խորացրել էր իրենց հոր ձերբակալության ականատեսը դարձած երեխաների վերապրած վախի և անհանգստության զգացումներն այն աստիճանի, որ նրանց նկատմամբ վերաբերմունքը գերազանցել էր պահանջվող դաժանության աստիճանը (§ 134; տե՛ս նաև *A v. Russia*, 2019, § 67, որտեղ ինը տարեկան աղջիկը դարձել էր հոր բռնի ձերբակալության ականատեսը, ով դիմադրություն ցույց չէր տվել և, համեմատության համար, *Ilievi and Ganchevi v. Bulgaria*, 2021, § 60, որտեղ իրենց ազգականների ձերբակալության ականատես դարձած ընտանիքի բոլոր անդամները չափահաս են եղել):

41. Ազատագրկման առանձնահատուկ համատեքստում ուժի գործադրման դեպքերի համար տե՛ս *Case-Law Guide on Prisoners' Rights*, իսկ հանրահավաքների և ցույցերի առանձնահատուկ համատեքստի համար տե՛ս *Case-Law Guide on Mass Protests*:

2. Չսպման հատուկ գործիքների կամ միջոցների կիրառում

42. Չսպման գործիքների, օրինակ՝ ձեռնաշղթաների կիրառումը, սովորաբար խնդիրներ չի առաջացնում 3-րդ հոդվածի ներքո, եթե միջոցը հարկադրվել է օրինական ձերբակալման կամ կալանավորման ընթացքում և չի ենթադրում ուժի գործադրում կամ հանրայնացում, որը գերազանցում է տվյալ հանգամանքներում ողջամտորեն անհրաժեշտ համարվող աստիճանը (*Shlykov and Others v. Russia*, 2021, § 72): Դատարանը հատուկ կարևորություն է տալիս յուրաքանչյուր գործի հանգամանքներին և քննության առումը զսպման միջոցների կիրառման անհրաժեշտությունը (*Pranjić-M-Lukić v. Bosnia and Herzegovina*, 2020, § 72): Այս իմաստով, կարևոր է, օրինակ՝ արդյոք եղել է հիմք հավատալու, որ խնդրո առարկա անձը ձերբակալության ընթացքում ցույց կտա դիմադրություն կամ կոխմի փախուստի, կհասցնի վնասվածքներ կամ

կյատնառի վնաս, կամ կթաքցնի ապացույցներ (*Svinarenko and Slyadnev v. Russia* [GC], 2014, § 117 և դրանում նշված գործեր):

43. Մասնավորապես, Դատարանը վճռել է, որ ձեռնաշղթաների կիրառումը կարող է արդարացված լինել որոշակի դեպքերում, օրինակ՝ բանտից դուրս փոխադրումների ընթացքում, եթե օգտագործվել է կարճաժամկետ կամ հանդիսացել գանգատաբերի նկատմամբ կիրառվող անհատական և պարբերաբար վերանայվող միջոց, որը բխում է նրա վարքի հիման վրա կատարված անհատական ռիսկերի գնահատումից (*Shlykov and Others v. Russia*, 2021, § 73): Դատարանը, այս համատեքստում դաժանության աստիճանը գնահատելու ընթացքում, անդրադառնում է մի շարք գործոնների, օրինակ՝ գանգատաբերի նկատմամբ նշանակված պատժի խստությանը, նրա դատվածությանը և նրա կողմից բռնության գործադրման պատմությանը, միջոցի համապատասխանությանը ներպետական օրենսդրությանը, միջոցի համաչափության անհատի գործողություններին, ազատությունից զրկելու օրինականությանը, վերաբերմունքի հանրային բնույթին, առողջության համար հետևանքներին, գանգատաբերի առողջական վիճակին, ձեռնարկված այլ անվտանգային միջոցառումներին, ձեռնաշղթաների կիրառման տևողությանը (*Shlykov and Others v. Russia*, 2021, § 73 և դրանում մեջբերված գործերը):

44. Իրավապահ մարմինների ձեռնարկված գործողությունների ընթացքում *պղպեղազագի* օգտագործման հարցում Դատարանը հավանություն է տվել Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ, անգլ.՝ CPT) հանձնարարականներին: ԽԿԿ-ի համաձայն պղպեղազագը պոտենցիալ վտանգավոր նյութ է և չպետք է օգտագործվի փակ տարածքներում: Եթե բացառության կարգով այն անհրաժեշտ է կիրառել բաց տարածքներում՝ պետք է լինեն հստակ սահմանված անվտանգության միջոցներ (*Tali v. Estonia*, 2014, § 78): Մասնավորապես, պղպեղազագը երբեք չպետք է օգտագործվի անձի դեմ, ով արդեն հսկողության տակ է (*Izci v. Turkey*, 2013, §§ 40-41 և *Ali Güneş v. Turkey*, 2012, §§ 39-40):

45. Դատարանը նաև հղում է կատարել ԽԿԿ-ի խիստ վերապահումներին, որոնք վերաբերվում են էլեկտրահարող սարքերի օգտագործմանը, հատկապես երբ դրանք կիրառվում են հպման միջոցով, քանի որ պատճառում են ուժեղ ցավ և հանգեցնում ժամանակավոր անշարժացման: Այս առնչությամբ Դատարանը շեշտել է, որ պատշաճ պատրաստված իրավապահները տիրապետում են հսկողության բազմաթիվ այլ մեթոդների, երբ այն անձը, ում պետք է վերցնեն իրենց հսկողության տակ գտնվում է ֆիզիկական հասանելիության սահմաններում (*Anzhelo Georgiev and Others v. Bulgaria*, 2014 §§ 75-76):

46. Դատավարության ընթացքում անձին մետաղյա ճաղավանդակում պահելու առնչությամբ Դատարանը գտել է, որ նման միջոցը, հաշվի առնելով դրա օբյեկտիվորեն նվաստացնող բնույթը, որն անհամատեղելի է ժողովրդավարական հասարակության առանձնահատկություն հանդիսացող քաղաքավարի վարքի չափանիշների հետ, ինքնին վիրավորում է մարդու արժանապատվությունը՝ խախտելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածը (*Svinarenko and Slyadnev v. Russia* [GC], 2014, § 138; տե՛ս նաև *Karachentsev v. Russia*, 2018, § 53, որտեղ գանգատաբերը մասնակցել է իր դատաքննությանը տեսակապի միջոցով՝ գտնվելով բանտի ներսում մետաղյա ճաղավանդակում): Համեմատության համար, պաշտպանյալների գտնվելը ապակյա բաժանարար պատի ետևում կամ ապակեպատ խցիկում ինքնին չունի նվաստացնող տարր, որը բավարար է դաժանության նվազագույն աստիճանի հասնելու համար: Այդ աստիճանի հնարավոր է հասնել, սակայն, եթե ապակյա բաժանարար պատի ետևում կամ ապակեպատ խցում պահելու հանգամանքները, իրենց համակցությամբ, կարող են պատճառել նրանց տառապանք կամ նեղություն, որի ծանրությունը գերազանցում է ազատագրվմանը բնորոշ տառապանքի անխուսափելի աստիճանը (*Yaroslav Belousov v. Russia*, 2016, § 125):

47. Ազատագրվման առանձնահատուկ համատեքստում նման և այլ մեթոդների կիրառման վերաբերյալ տե՛ս *Case-Law Guide on Prisoners' Rights*:

Գ. Մերկացմամբ զուգորդվող կամ ինտիմ անձնական խուզարկություն

48. Մերկացմամբ զուգորդվող կամ ինտիմ անձնական խուզարկությունը, որն իրականացվում է ձերբակալության ընթացքում չի հակասում 3-րդ հոդվածին, պայմանով որ այն կատարվում է պատշաճ կերպով՝ մարդու արժանապատվության նկատմամբ պատշաճ հարգանքով և իրավաչափ նպատակով (*Wieser v. Austria*, 2007, § 39; տե՛ս նաև *Roth v. Germany*, 2020, § 65 ազատագրկման համատեքստում և *Case-Law Guide on Prisoners' Rights*):

Ե. Չինվորական ծառայություն

49. Պարտադիր զինվորական ծառայությունը հաճախ ընդգրկում է տառապանքի և ստորացման տարրեր, ինչպես անձին ազատությունից զրկելու միջոցները: Մակայն, բազմաթիվ գործողություններ, որոնք կհանդիսանային նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունք բանտարկյալների նկատմամբ, կարող են չհատել վատ վերաբերմունքի շեմը, եթե դրանք ի հայտ են գալիս զինված ուժերում, պայմանով որ դրանք նպաստում են զինված ուժերի հատուկ առաքելությանն այն մասով, որ հանդիսանում են, օրինակ, մարտական պայմաններին պատրաստության մաս (*Chember v. Russia*, 2008, § 49):

50. Այդուհանդերձ, պետությունը պարտավոր է երաշխավորել, որ անձը զինվորական ծառայությունն անցի այնպիսի պայմաններում, որոնք համադրելի են իր մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքի հետ, զինվորական պատրաստության ընթացակարգերը և մեթոդները չպատճառեն նրան այնպիսի ցավ կամ տառապանք, որը գերազանցում է զրկանքների ծանրության այն անխուսափելի աստիճանը, որը ներհատուկ է զինվորական կարգապահությանը և, հաշվի առնելով նման ծառայության գործնական պահանջները, նրա առողջությունը և բարօրությունն ապահովվեն, ի թիվս այլ գործոնների, նրան անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով (*Chember v. Russia*, 2008, § 50):

51. Թեև ծանր ֆիզիկական պատրաստությունը կարող է լինել զինվորական կարգապահության անբաժանելի մասը, Դատարանը շեշտել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածին համահունչ մնալու համար, այն չպետք է գերազանցի այն աստիճանը, որը կարող է վտանգել զորակոչիկների առողջությունը և բարօրությունը կամ կարող է նվաստացնել նրանց մարդկային արժանապատվությունը (*Chember v. Russia*, 2008, § 51):

52. Դատարանը, օրինակ, գտել է 3-րդ հոդվածի խախտում, երբ ծնկների հետ խնդիրներ ունեցող անձին հրամայել են 350 կքանիստ անել՝ որպես կացարանները բավականաչափ մանրագնին չմաքրելու պատիժ (*Chember v. Russia*, 2008, §§ 52-57): Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խախտվել է նաև *Taştan v. Turkey*, 2008, դեպքում, երբ 71 տարեկան անձին զորակոչել էին զինվորական ծառայության և ստիպել անցնել զինվորական պատրաստություն, որը նախատեսված է շատ ավելի երիտասարդ զորակոչիկների համար (§ 31): Դատարանը գտել է նաև, որ 3-րդ հոդվածը խախտվել է *Lyalyakin v. Russia*, 2015, գործով, երբ զորակոչիկին, ով փորձել էր փախուստի դիմել, ստիպել էին կանգնել գումարտակի առջև միայն զինվորական վարտիքով (§§ 72-79):

Զ. Ազատությունից զրկման պայմաններ

53. Ազատությունից զրկումը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի լույսի ներքո քննելու համար, տեղ գտած տառապանքը և նվաստացումը պետք է գերազանցեն ինքնին ազատությունից զրկելու հետ կապված տառապանքի և նվաստացման անխուսափելիության աստիճանը: Միաժամանակ, իշխանությունները պետք է երաշխավորեն, որ անձը պահվի մարդու արժանապատվությունը հարգող պայմաններում, ազատագրկման ձևով նշանակված պատժի կատարման կամ խափանման այլ միջոցների կիրառման եղանակը և մեթոդը չպատճառեն անձին այնպիսի նեղություն կամ զրկանք, որը գերազանցում է տառապանքի ծանրության այն անխուսափելի աստիճանը, որը ներհատուկ է ազատությունից զրկմանը, և, հաշվի առնելով ազատագրկման գործնական պահանջները, պատշաճ ապահովեն տվյալ անձի առողջությունը և բարօրությունը (*Neshkov and Others v. Bulgaria*, 2015, § 227 և *Muršić v. Croatia* [GC], 2016, § 99):

54. Ազատությունից զրկման պայմանները գնահատելիս հարկ է նկատի առնել այդ պայմանների ընդհանուր՝ համակցված ազդեցությունը, և գանգատաբերի ներկայացրած կոնկրետ մեղադրանքները: Հարկ է նաև նկատի առնել որոշակի պայմաններում անձի պահման տևողությունը (*Ananyev and Others v. Russia*, 2012, § 142; *Idalov v. Russia* [GC], 2012, § 94 և *Muršić v. Croatia* [GC], 2016, § 101):

55. Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղումով՝ *Case-Law Guide on Prisoners' Rights*:

Է. Բժշկական սպասարկումն ազատությունից զրկման ընթացքում

56. 3-րդ հոդվածը պարտավորեցնում է պետությանը պաշտպանել ազատությունից զրկված անձանց բարօրությունը, մասնավորապես՝ տրամադրելով նրանց անհրաժեշտ բժշկական օգնություն (*Blokhin v. Russia* [GC], 2016, § 136 և *Mozer v. Moldova and Russia* [GC], § 178):

57. Այս իմաստով, այն փաստը, որ բժիշկը քննել է ազատությունից զրկված անձին և նշանակել որոշակի բուժում ինքնաբերաբար չի հանգեցնում եզրակացության, որ բժշկական օգնությունը եղել է համարժեք: Իշխանությունները պետք է նաև ապահովեն անազատության մեջ գտնվելու ամբողջ ընթացքում ազատությունից զրկված անձի առողջական վիճակի և բուժման վերաբերյալ լիարժեք բժշկական քարտի վարումը, արագ և ճշգրիտ ախտորոշումը և բուժօգնությունը, անհրաժեշտության դեպքում, որը պայմանավորված է առողջական վիճակով, կանոնավոր և սիստեմատիկ հսկողությունը, որն ընդգրկում է ազատությունից զրկված անձի առողջական խնդիրները պատշաճ բուժելուն կամ դրանց խորացումը կանխարգելելուն ուղղված համապարփակ բուժական ռազմավարություն, այլ ոչ թե սիմպտոմատիկ բուժում: Իշխանությունները պետք է նաև ցուցադրեն, որ ստեղծվել են նշանակված բուժումը փաստացի իրականացնելու համար անհրաժեշտ պայմանները: Ավելին, բանտի ներսում տրամադրված բժշկական սպասարկումը պետք է լինի պատշաճ, այսինքն՝ համադրելի այն մակարդակի հետ, որն իշխանությունները հանձնառու են տրամադրել ամբողջ բնակչությանը: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի պետք է երաշխավորել բժշկական սպասարկման այն նույն մակարդակը, որը հասանելի է բանտից դուրս լավագույն բժշկական հաստատություններում: Երբ բուժումը հնարավոր չէ ապահովել ազատագրված վայրում՝ պետք է հնարավոր լինի ազատությունից զրկված անձին փոխադրել հիվանդանոց կամ մասնագիտացված բաժանմունք (*Rooman v. Belgium* [GC], 2019, §§ 147-148):

58. Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղումով՝ *Case-Law Guide on Prisoners' Rights*.

Ը. Տուժողի ազգականների տառապանքը

1. Նախնական դիտարկումներ

59. Իր նախադեպային իրավունքում Դատարանը միշտ մեծ ուշադրություն է դարձրել ծանր հոգեբանական ազդեցությանը, որը մարդու իրավունքների լուրջ խախտումն ունի տուժողի ընտանիքի անդամների վրա, ովքեր հանդես են գալիս Դատարանի առջև որպես գանգատաբերներ: Այդուհանդերձ, տուժողի ազգականների մասով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի առանձին խախտում արձանագրելու համար պետք է լինեն հատուկ գործոններ, որոնք նրանց տառապանքին հաղորդում են այնպիսի չափ և բնույթ, որոնք տարբերակում են այն հոգեբանական ապրումներից, որոնք անխուսափելիորեն և ինքնաբերաբար բխում են վերոնշյալ խախտումից (*Janowiec and Others v. Russia* [GC], 2013, § 177): Այս վերնագրի ներքո նախադեպային իրավունքը հիմնականում զարգացել է անհետ կորած անձանց ազգականներին առնչվող մասով: Դատարանը, սակայն, բացառության կարգով կիրառել է անհետացման գործերով սահմանված սկզբունքները նաև անհետացման կոնտեքստից դուրս (*Nicolae Virgiliu Tănase v. Romania* [GC], 2019, § 227):

2. Անհետ կորած անձանց ազգականներ

60. Անհետացման երևույթն առանձնահատուկ բեռ է դնում անհետ կորած անձանց ազգականների վրա, ովքեր տեղյակ չեն իրենց սիրելիների ճակատագրի մասին և տառապում են անորոշությունից: Այսպիսով, Դատարանի նախադեպային իրավունքով ի սկզբանե ճանաչվել է, որ ազգականների վիճակը կարող է վկայել 3-րդ հոդվածին հակասող անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի մասին: Խախտման էությունը ոչ թե այն է, որ եղել է անհետ կորած անձին առնչվող մարդու իրավունքների լուրջ խախտում, այլ այն, թե ինչպիսի արձագանք և վերաբերմունք են դրսևորել իշխանություններն այդ իրավիճակում, երբ խնդիրը ներկայացվել է նրանց ուշադրությանը (*Varnava and Others v. Turkey* [GC], 2009, § 200):

61. Վերաբերելի այլ գործոնների շարքում են ընտանեկան կապի մերձավորությունը, փոխհարաբերության առանձնահատուկ հանգամանքները, խնդրո առարկա իրադարձություններին ընտանիքի անդամի ականատես լինելը և անհետ կորած անձի մասին տեղեկություններ ստանալու փորձերին ընտանիքի անդամի ներգրավվածությունը: Նման խախտում չի արձանագրվում միայն այն դեպքերով, երբ պատասխանող պետությունը մեղավոր է ճանաչվել անհետացման համար, այլ կարող է նաև առաջանալ, երբ իշխանությունները չեն պատասխանել տեղեկատվություն տարամադրելու ազգականների հարցմանը կամ խոչընդոտներ են ստեղծել նրանց համար՝ նրանց վրա թողնելով որևէ փաստ հայտնաբերելուն ուղղված ջանքերի բեռը, ինչը կարող է համարվել անհետ կորած անձի գտնվելու վայրի և ճակատագրի համար պատասխանատվություն կրելու պարտավորության ակնհայտ, շարունակական և կոպիտ անտեսում (*Varnava and Others v. Turkey* [GC], 2009, § 200; *Janowiec and Others v. Russia* [GC], 2013, § 178):

62. Օրինակ՝ *Orhan v. Turkey*, 2002, գործով զանգատաբերը բողոք է ներկայացրել առ այն, որ իր ավագ որդու և երկու եղբայրների անհետացումը նրան պատճառել է տառապանք՝ խախտելով 3-րդ հոդվածը: Դատարանը նշել է, որ զանգատաբերը ներկա է եղել և տեսել ինչպես են իր որդին և եղբայրները լքում գյուղը զինվորների հետ, որից հետո նրանք ութ տարի է ինչ անհետացել են: Դատարանը նաև նշել է, որ զանգատաբերը կրել է բազմաթիվ հարցումներ և միջնորդություններ ներկայացնելու բեռը, սակայն իշխանություններից երբեք չի ստացել տեղեկություն կամ բացատրություն, ոչ էլ տեղեկացվել է կատարված քննությունների արդյունքների մասին: Դատարանը լրացուցիչ նշել է, որ զանգատաբերը վերջերս կորցրել է իր տան և գյուղի անվտանգությունը: Բոլոր այս գործոնների հաշվառմամբ Դատարանը եզրահանգել է, որ անհանգստությունը և անորոշությունը, որոնք տևական և շարունակական ժամանակ ունեցել է զանգատաբերը, պատճառել են նրան դաժան հոգեկան տառապանք և ցավ՝ հանդիսանալով 3-րդ հոդվածին հակասող անմարդկային վերաբերմունք (§§ 359-360; տե՛ս նաև *Imakayeva v. Russia*, 2006, § 165, որտեղ Դատարանը շեշտել է նաև, որ իշխանություններն անհիմն մերժել են զանգատաբերին տրամադրել քրեական գործի նյութերը, որոնք կարող էին լույս սփռել իր անհետ կորած ազգականների ճակատագրի վրա՝ ուղղակիորեն կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դատավարության միջոցով; և *Enzile Özdemir v. Turkey*, 2008, §§ 64-65, որտեղ Դատարանը ևս ընդգծել է պաշտոնական կնիքի առկայությունը, որով հաստատվել է զանգատաբերի ամուսնու կալանավորման փաստը և զանգատաբերին հայտնվել է իր անհետ կորած ամուսնու գտնվելու վայրը, սակայն որը հետագայում չեղարկվել է իշխանությունների կողմից առանց որևէ բացատրության):

63. Դատարանը, համեմատության համար, չի արձանագրել 3-րդ հոդվածի խախտում զանգատաբերի նկատմամբ, ում ամուսինն անհետ կորել էր կյանքին սպառնացող հանգամանքներում, քանի որ նա չէր եղել անհետացմանը հանգեցրած ենթադրյալ իրադարձությունների ականատեսը, ոչ էլ ցուցադրել էր իր ներգրավվածությունն ընթացող քննությանը (*Nesibe Haran v. Turkey*, 2005, §§ 83-84; տե՛ս նաև *Kagirov v. Russia*, 2015, § 113, որտեղ Դատարանին չէին համոզել, որ քննչական մարմինների գործելակերպը, որն անփույթ էր, հասել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պահանջվող դաժանության աստիճանին):

3. Մահվան հաստատված դեպքեր

64. Դատարանն ավելի խիստ մոտեցում է կիրառում այն իրավիճակներում, երբ անձը վերցվել է հսկողության տակ, սակայն հետագայում հայտնաբերվել է մահացած՝ իր ճակատագիրը

հարաբերականորեն կարճ ժամանակ անհայտ լինելուց հետո: Մի շարք չեչենական գործերով, երբ գանգատաբերներն իրենց հարազատների սպանության ակնատեսը չէին եղել, այլ իմացել էին նրանց մահվան մասին միայն նրանց մարմինները հայտնաբերելու ժամանակ, Դատարանը համարել է, որ 3-րդ հոդվածի առանձին խախտում արձանագրելու կարիք չկա, քանի որ արդեն գտել էր Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութական և դատավարական բաղադրիչների խախտում: Ավելին, իշխանությունների կողմից 2-րդ հոդվածի խախտմամբ սպանված անձանց առնչվող գործերով Դատարանը վճռել է, որ 3-րդ հոդվածի կիրառումը, սովորաբար, չի տարածվում ազգականների վրա՝ ելնելով խնդրո առարկա մահվան պատճառ հանդիսացած միջադեպի ակնթարթային բնույթից: Դատարանը 3-րդ հոդվածի առանձին խախտում է արձանագրել միայն հաստատված մահվան այն դեպքերով, երբ գանգատաբերները եղել են իրենց ընտանիքի անդամների տառապանքի անմիջական վկաները (*Janowiec and Others v. Russia* [GC], 2013, §§ 179-181 և դրանում մեջբերված գործերը):

4. Դիակների հետ վարվեցողություն

65. Դատարանը վճռել է, որ մահվան հետ վերանում են մարդկային որակները և, հետևաբար, վատ վերաբերմունքի արգելքն այլևս կիրառելի չէ դիակների նկատմամբ (*Akpınar and Altun v. Turkey*, 2007, § 82): Սակայն, դիակների հետ վարվեցողությունն առաջացրել է 3-րդ հոդվածի խախտում մահացածի ազգականների մասով (§§ 84-87):

66. *Khadzhiyev and Others v. Russia*, 2008, գործով Դատարանն արձանագրել է 3-րդ հոդվածի խախտում, որում գանգատաբերները չէին կարողացել պատշաճ կերպով հուղարկավորել իրենց երեխաների անդամատված և գլխատված մարմինները, քանի որ գտնվել էին միայն մատուցների որոշ մասեր (§ 121): *Akkum v. Turkey*, 2005, գործով 3-րդ հոդվածի խախտում էր արձանագրվել հոր նկատմամբ, ում հանձնել էին որդու խեղված մարմինը (§ 259): *Elberte v. Latvia*, 2015, գործով Դատարանը գտել էր 3-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ առանց գանգատաբերի նախնական համաձայնության կամ իմացության և, խախտելով ներպետական օրենսդրությունը, նրա մահացած ամուսնուց վերցրել էին հյուսվածքներ (§ 143):

67. *Cangöz and Others v. Turkey*, 2016, գործով խախտում չի արձանագրվել, երբ գանգատաբերների ազգականների մարմինները, ում սպանել էին զինծառայողները, բերվել էին ռազմական բազա: Այնտեղ մարմինները դրվել էին բացօթյա այնպիսի վայրում, որտեղ տեսանելի էին զինվորներին, մերկացվել էին և զննության ենթարկվել դատախազի և երկու բժիշկների կողմից: Դատարանը վճռել է, որ, անկախ այն հանգամանքից՝ գանգատաբերներն անձամբ էին տեսել մարմինները, թե ոչ, իրենց ազգականների մարմինների զննության պայմանների մասին իմացությունը պատճառել էր նրանց հոգեկան տառապանք: Սակայն, հատուկ ուշադրություն դարձնելով նման վերաբերմունքի նպատակին (մարմինների զննության իրականացում), հանգամանքները գանգատաբերներին չեն պատճառել այն աստիճանի և բնույթի տառապանք, որը տարբերակում է այն հոգեկան ապրումներից, որոնք նմանօրինակ իրավիճակում անխուսափելիորեն կունենար մահացած անձի ընտանիքի ցանկացած անդամ (*Cangöz and Others v. Turkey*, 2016, §§ 157-168):

5. Այլ

68. *Mubilanzila Mayeka and Kaniki Mitunga v. Belgium*, 2006, գործն առնչվում էր ապաստան հայցող առանց ուղեկցության անչափահասի կալանավորմանը և վտարմանը: Դատարանը, նկատի առնելով ազգային իշխանությունների գործողությունները, արձանագրեց, որ առաջին գանգատաբերին՝ կալանավորված հինգ տարեկան երեխայի մորը, դատարանը կալանավորման արդյունքում պատճառվել են խորը վիշտ և անհանգստություն: Հաշվի առնելով գործի հանգամանքները՝ Դատարանը եզրակացրեց, որ տառապանքը հասել է 3-րդ հոդվածի խախտում ճանաչելու համար պահանջվող դաժանության աստիճանին (§§ 55-59): Համեմատության համար՝ Դատարանը գտավ, որ ութ տարեկան երեխայի մոր անհանգստությունը, ով վերջինիս մասով իրականացվող քննության ընթացքում մեկ օր էր անցկացրել ոստիկանության բաժնում՝ առանց երեխաների պաշտպանության մարմիններին այդ մասին հաղորդում տալու, չէր հասել դաժանության պահանջվող նվազագույն աստիճանին (*Tarak and Depe v. Turkey*, 2019, § 79):

69. Մեկ այլ գործով, երբ անհամարժեք բժշկական օգնության հետևանքով զանգատարների որդին մահացել էր բանտում ՋԻԱՀ-ից, Դատարանը, հաշվի առնելով մի շարք գործոններ, այդ թվում՝ որդու վիճակի վրա ուշադրություն հրավիրելու զանգատարների բազմաթիվ փորձերը և իր խնդրանքների նկատմամբ իշխանությունների ցուցաբերած ցինիկ, անտարբեր և դաժան վերաբերմունքը, որը դրսևորվել էր թե՛ նախքան որդու մահը, թե՛ դրան հաջորդած քննության ընթացքում, գտավ, որ զանգատարերը տուժել էր անմարդկային վերաբերմունքից (*Salakhov and Islyamova v. Ukraine*, 2013, § 204):

70. Մեռական բռնության մեղադրանքների քննության կոնտեքստում Դատարանը համարել էր, որ զանգատարերը՝ ենթադրյալ տուժողի հայրը, չէր ներկայացրել իր նկատմամբ իշխանությունների ոչ պատշաճ արձագանքների կամ վերաբերմունքի որևէ օրինակ և, հետևաբար, մերժել զանգատի այս մասը (*M.P. and Others v. Bulgaria*, 2011, §§ 123-125):

Թ. Մեղադրական դատավճիռ և պատժի նշանակում

1. Քրեական պատասխանատվության տարիք

71. *V. v. the United Kingdom*, 1999, և *T. v. The United Kingdom*, 1999, գործերով Դատարանը քննության է առել այն հարցը, թե արդյոք տասը տարեկան հասակում կատարված արարքների համար զանգատարերներին քրեական պատասխանատվության ենթարկելը կարող էր առաջացնել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Դատարանը գտավ, որ այդ փուլում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները չունեին քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի վերաբերյալ հստակ ընդհանուր չափանիշ: Եթե նույնիսկ Անգլիան և Ուելսը սակավաթիվ եվրոպական պետությունների շարքում էին, որտեղ գործում էր քրեական պատասխանատվության ցածր տարիք, տասը տարեկան հասակը չէր կարող համարվել այնքան երիտասարդ, որ անհամաչափորեն տարբերվեր տարիքային այն շեմից, որին հետևում էին եվրոպական այլ պետություններ: Հետևաբար, Դատարանը եզրակացրեց, որ զանգատարերներին քրեական պատասխանատվության ենթարկելն ինքնին չի առաջացրել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (*V. v. the United Kingdom* [GC], 1999, §§ 72-74; *T. v. The United Kingdom* [GC], 1999, §§ 70-72):

2. Լրջորեն անհամաչափ պատիժներ

72. Դատարանն ընդունում է, որ հիմնականում պատշաճ պատիժների նշանակումը, տեսականորեն, դուրս է Կոնվենցիայի շրջանակից, սակայն լրջորեն անհամաչափ պատիժը կարող է նշանակման պահին համարվել վատ վերաբերմունք, որը հակասում է 3-րդ հոդվածին: Սակայն Դատարանը շեշտել է, որ «լուրջ անհամաչափությունը» խիստ թեստ է և այն հնարավոր է հաղթահարել միայն հազվադեպ և բացառիկ դեպքերում (*Babar Ahmad and Others v. the United Kingdom*, 2012, § 237; *Harkins and Edwards v. the United Kingdom*, 2012, § 133):

73. Օրինակ, Դատարանը չընդունեց, որ զանգատարների հանձնումը կարող էր առաջացնել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին հակասող վերաբերմունքի իրական վտանգ մի գործով, ուր ապացույցները վկայում էին այն մասին, որ Միացյալ Նահանգներին հանձնվելու դեպքում զանգատարերը կարող էր դատապարտվել մինչև երեսունհինգ տարվա ազատազարկման, բայց չկար նվազագույն պատժի նշանակման պահանջ: Հաշվի առնելով մեղսագրվող հանցանքների բնույթը, որոնք ընդգրկում էին ահաբեկչության հանցագործություններ, նաև պատժի լրջորեն անհամաչափ լինելու ապացուցման համար պահանջվող բարձր շեմը, Դատարանը չընդունեց, որ նշանակված պատժի տևողության արդյունքում զանգատարերի հանձնումը կարող էր առաջացնել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին հակասող վերաբերմունքի իրական վտանգ (*Aswat v. UK*, 2013, § 58):

74. Մեկ այլ գործով, որտեղ զանգատարերները բողոք էին ներկայացրել դատապարտյալների փոխանցման համաձայնագրի հիման վրա Թաիլանդի դատարանների նշանակված երկարատև պատժի կատարումը Միացյալ Թագավորությունում շարունակելու վերաբերյալ, Դատարանը շեշտեց, որ, երբ քննվում է այն հարցը, թե արդյոք դատապարտյալների փոխանցման համաձայնագրի ներքո պատժի շարունակվող կատարման կոնտեքստում պատիժը խախտում է

3-րդ հոդվածի պահանջները, ուշադրությունը պետք է սևեռել այն հարցի վրա, թե արդյոք պատճառած տառապանքը կամ նվաստացումը գերազանցում են տառապանքի և նվաստացման այն անխուսափելի տարրը, որը փոխկապակցված է օտարերկրյա դատարանի կողմից ազատագրկման ձևով նշանակված պատժի կատարման հետ: Տառապանքի և նվաստացման աստիճանը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել պատժի նշանակման հարցում պետությունների որդեգրած տարբեր մոտեցումները և պատիժների պատշաճ տևողության հարցում պետությունների միջև իրավաչափ ու ողջամիտ տարբերությունները: Դատարանը պետք է նաև հաշվի առնի այն փաստը, որ փոխանցումը տեղի է ունեցել արդարադատության իրականացման ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում, որը, ընդհանուր առմամբ, բխում է խնդրո առարկա անձանց շահերից: Հետևաբար, երբ միջազգային համագործակցության որևէ միջոց ուղղված է արտերկրում քրեական պատասխանատվության ենթարկված անձանց հիմնարար իրավունքների առաջխաղացմանը և պաշտպանությանը, այդ միջոցի կիրառման արդյունքում գանգատաբերի ստացած օգուտը կարևոր գործոն է, որը նպաստում է այն եզրակացությանը, որ պատժի կատարման եղանակը և մեթոդը չեն ենթարկում գանգատաբերին այնպիսի նեղության կամ դժվարության, որը գերազանցում է ազատագրկմանը ներհատուկ անխուսափելի տառապանքի աստիճանը (*Willcox and Hurford v. the United Kingdom*, 2013, § 76):

3. Մահապատիժ

75. *Al-Saadoon and Mufdhi v. the United Kingdom*, 2010, գործում Դատարանը նշեց, որ անդամ պետությունները, բացառությամբ երկուսի, ստորագրել են բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին թիվ 13 Արձանագրությունը և այն չեն վավերացրել ստորագրած պետություններից միայն երեքը: Այս թվերը՝ մահապատժի մորատորիումի կիրառման պետությունների հետևողական պրակտիկայի հետ համակցությամբ, համարվել են լուրջ ցուցիչ, որ 2-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն՝ բոլոր հանգամանքներում մահապատիժն արգելելու համար:² Այս ենթատեքստում Դատարանը չի համարում, ինչպես նախկինում *Soering v. the United Kingdom*, 1989, §§ 102-104, գործում, որ 2-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության ձևակերպումը շարունակում է հանդիսանալ արգելք 3-րդ հոդվածում «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ» բառերն իր կողմից որպես մահապատիժն ընդգրկող մեկնաբանելու համար (*Al-Saadoon and Mufdhi v. the United Kingdom*, 2010, § 120): Մահապատիժը, հետևաբար, դարձել է պատժի անընդունելի ձև, որն այլևս չի թույլատրվում 2-րդ հոդվածով, որում փոփոխություններ են կատարվել թիվ 6 և 13 Արձանագրություններով և որը հանդիսանում է 3-րդ հոդվածի ներքո «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ» (*A.L. (X.W.) v. Russia*, 2015, § 64):

76. Կոնվենցիայի 3-րդ հոդվածն արգելում է անհատի հանձնումը, վտարումը և այլ փոխանցումը մեկ այլ պետության, եթե կան ծանրակշիռ հիմքեր հավատալու, որ այնտեղ տվյալ անհատին կարող է սպառնալ մահապատժի ենթարկվելու իրական վտանգ (*Al-Saadoon and Mufdhi v. the United Kingdom*, 2010, §§ 123 և 140-143; *A.L. (X.W.) v. Russia*, 2015, §§ 63-66; *Shamayev and Others v. Georgia and Russia*, 2005, § 333):

77. Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղումով՝ *Case-Law Guide on Immigration*:

4. Ցմահ ազատագրկում

78. Կոնվենցիան չի արգելում առանձնապես ծանր հանցագործությունների, օրինակ՝ սպանության համար դատապարտվածների նկատմամբ ցմահ ազատագրկման ձևով պատժի նշանակումը: Սակայն 3-րդ հոդվածին համապատասխանելու համար նման պատիժը պետք է լինի *de jure* և *de facto* կրճատվող, ինչը նշանակում է, որ պետք է լինի թե՛ բանտարկյալի ազատ

² 2022 թվականի մարտի 16-ին Ռուսաստանի Դաշնությունը դադարել է Եվրոպայի խորհրդի անդամ լինելուց, իսկ 2022 թվականի սեպտեմբերի 16-ին՝ Կոնվենցիայի Մասնակից պետություն լինելուց: Սույն ուղեցույցի վերջին թարմացման օրվա դրությամբ թիվ 13 Արձանագրությունը ստորագրվել է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների, ինչպես նաև վավերացվել դրանց բոլորի կողմից՝ բացառությամբ մեկի (Ադրբեջան):

արձակման, թե՛ պատժի վերանայման հնարավորություն: Նման վերանայման հիմքը պետք է տարածվի այն հարցի գնահատման վրա, թե արդյոք գոյություն ունեն բանտարկյալի ազատագրվումը շարունակելու իրավաչափ պենոլոգիական հիմքեր: Այս հիմքերն ընդգրկում են պատիժը, կանխարգելումը, հասարակական պաշտպանության ապահովումը և վերականգնումը: Պարտադիր չէ, որ դրանց միջև հավասարակշռությունը լինի ստատիկ և այն կարող է փոխվել պատժի կրման ընթացքում, ըստ այդմ ազատագրվման համար սկզբում բերված գլխավոր հիմնավորումը կարող է փոխվել պատժի երկարատև կրումից հետո: Հատուկ ընդգծվում է վերականգնման հիմքի կարևորությունը, որն է դատապարտյալի վերահնտեգրումը հասարակության մեջ, քանի որ դա է այժմ շեշտադրում եվրոպական քրեակատարողական քաղաքականությունը, որն արտացոլված է Պայմանավորվող կողմերի պրակտիկայում, Եվրոպայի խորհրդի ընդունած համապատասխան չափանիշներում և վերաբերելի միջազգային նյութերում (*Murray v. the Netherlands* [GC], 2016, § 102; և *Hutchinson v. the United Kingdom* [GC], 2017, § 42):

79. Ցմահ ազատագրվման ձևով նշանակված պատիժը չի դառնում չկրճատվող միայն այն պատճառով, որ գործնականում հնարավոր է, որ այն կրեն ամբողջությամբ (*Murray v. The Netherlands* [GC], 2016 § 99, լրացուցիչ հղումներով): Սակայն մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքը պահանջում է քրեակատարողական մարմիններից ջանքեր գործադրել ցմահ ազատագրվման դատապարտված անձի վերականգնման ուղղությամբ (*Murray v. the Netherlands* [GC], 2016, § 104): Դրանից բխում է, որ պահանջվող վերանայումը պետք է հաշվի առնի առաջընթացը, որը դատապարտյալը գրանցել է վերականգնման ուղղությամբ՝ գնահատելով՝ արդյոք նման առաջընթացը եղել է այնքան նշանակալից, որ շարունակական ազատագրվումն այլևս չի կարող հիմնավորվել իրավաչափ պենոլոգիական հիմքերով: Հետևաբար, մարդասիրական հիմքերով սահմանափակվող վերանայումը բավարար չէ (*Hutchinson v. the United Kingdom* [GC], 2017, § 43):

80. Վերանայմանն առնչվող՝ ներպետական օրենսդրության մեջ սահմանված չափորոշիչները և պայմանները պետք է լինեն բավարար չափով հստակ և որոշակի, ինչպես նաև արտացոլեն Դատարանի վերաբերելի նախադեպային իրավունքը: Սա նշանակում է, որ ցմահ ազատագրվման դատապարտված անձինք ամենասկզբից իրավունք ունեն իմանալու՝ ինչ պետք է անեն, որ դիտարկվի նրանց ազատ արձակման հնարավորությունը, և ինչ պայմաններով: Սա ընդգրկում է պատժի վերանայման կամ դրա համար դիմելու ժամկետները (*Vinter and Others*, 2013, § 122): Այս առնչությամբ Դատարանը նշել է, որ վերաբերելի համեմատական և միջազգային նյութերը հստակ պաշտպանում են վերանայման իրականացումը պատժի նշանակումից ոչ ուշ, քան քսանհինգ տարի անց՝ դրան հաջորդող պարբերական վերանայումներով (*ibid.*, §§ 68, 118, 119 և 120): Դատարանը, սակայն, նշել է նաև, որ այս խնդիրը գտնվում է այն հայեցողության շրջանակում, որը քրեական արդարադատության և պատժի նշանակման հարցերում պետք է թողնել Պայմանավորվող կողմերին (*ibid.*, §§ 104, 105 և 120):

81. Վերանայման բնույթի վերաբերյալ Դատարանը նշել է, որ իր խնդիրը չէ որոշել՝ արդյոք վերանայումը պետք է իրականացվի դատական, թե գործադիր իշխանության կողմից՝ հաշվի առնելով Պայմանավորվող կողմերին տրվող թույլատրելի հայեցողության շրջանակը (*Vinter and Others*, 2013, § 120): Հետևաբար, յուրաքանչյուր պետություն ինքը պետք է որոշի, արդյոք պատիժները պետք է վերանայվեն գործադիր, թե դատական իշխանության կողմից (*Hutchinson v. the United Kingdom* [GC], 2017, § 44):

82. Տեղափոխման գործնական անհնարինության պատճառով բանտարկյալի շարունակական ազատագրվումը, այն հանգամանքներում, երբ նրան անազատության մեջ պահելն այլևս անհրաժեշտ չէր համարվում ներպետական իշխանությունների կողմից, փաստացիորեն հավասարգոր էր չկրճատվող ցմահ ազատագրվման՝ ազատ արձակման իրատեսական հեռանկարի բացակայության պատճառով (*Horion v. Belgium*, 2023, § 75):

83. Հանձնման կոնտեքստում՝ երրորդ երկրում ցմահ ազատագրվման ձևով նշանակված պատժի համապատասխանությունը Կոնվենցիային չի գնահատվում բոլոր այն չափանիշների հաշվառմամբ, որոնք կիրառելի են ցմահ դատապարտյալների նկատմամբ Պայմանավորվող պետություններում: Համապատասխանաբար, *Vinter and Others v. the United Kingdom* [GC] գործով սահմանված դատավարական երաշխիքները, որոնք վերաբերում են ներպետական

կոնտեքստին, կիրառելի չեն հանձնման դեպքում: Դատարանը կիրառում է երկու փուլերից բաղկացած հարմարեցված մոտեցում. առաջին փուլում հարկ է պարզել՝ արդյոք զանգատաբերը ներկայացրել է ապացույցներ, որոնք կարող են ապացուցել, որ կան էական հիմքեր հավատալու, որ, հանձնման և մեղադրական դատավճռի դեպքում, կա իրական վտանգ, որ նրան կդատապարտեն ցմահ ազատազրկման՝ առանց պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորության: Եթե այդպես է, ապա երկրորդ փուլում պետք է պարզել՝ արդյոք պատժի նշանակման պահից գոյություն ունի վերանայման մեխանիզմ, որը երրորդ պետության իշխանություններին հնարավորություն է տալիս դիտարկել դատապարտյալի առաջընթացը վերականգնման ուղղությամբ, կամ կան ազատ արձակման որևէ այլ հիմքեր՝ ելնելով նրա վարքից կամ այլ վերաբերելի անձնական հանգամանքներից (*Sanchez-Sanchez v. the United Kingdom*, §§ 83-97):

84. Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղումներով՝ *Case-Law Guide on Prisoners' Rights* և *Case-Law Guide on Immigration*:

Ժ. Հանձնում և արտաքսում

85. Դատարանն ընդգծել է, որ Պայմանավորվող կողմերը՝ միջազգային իրավունքի ընդունված նորմերին համապատասխան և հաշվի առնելով իրենց պայմանագրային պարտավորությունները, այդ թվում՝ Կոնվենցիան, իրավունք ունեն վերահսկել օտարերկրացիների մուտքը, կացությունը և արտաքսումը (*Khasanov and Rakhmanov v. Russia* [GC], 2022, § 93): Քաղաքական ապաստանի իրավունքը ներառված չէ Կոնվենցիայում կամ դրա Արձանագրություններում: Մակայն, օտարերկրացուն վտարելու, հանձնելու կամ երկրից դուրս հանելու որևէ այլ միջոց կարող է խնդիրներ առաջացնել 3-րդ հոդվածի հետ և, հետևաբար, հանգեցնել Կոնվենցիայի շրջանակներում Պայմանավորվող կողմերի պատասխանատվությանը, եթե ներկայացվել են լուրջ հիմքեր հավատալու համար, որ խնդրո առարկա անձին երկրից դուրս հանելու դեպքում ընդունող պետությունում նա կենթարկվի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի իրական վտանգի: Նման հանգամանքներում, 3-րդ հոդվածը սահմանում է այն անհատին տվյալ երկիր չտեղափոխելու պարտավորություն (*Ilias and Ahmed v. Hungary* [GC], 2019, §§ 125-126):

826. Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղումով՝ *Case-Law Guide on Immigration*:

Ի. Հարկադիր բժշկական միջամտություններ

ա. Ընդհանուր սկզբունքներ

837. Բժշկության ընդունված սկզբունքների տեսանկյունից բուժական անհրաժեշտություն ունեցող որևէ միջոց չի կարող, որպես կանոն, համարվել անմարդկային և նվաստացնող: Այդուհանդերձ, Դատարանը պետք է համոզվի, որ համոզիչ կերպով ապացուցվել է բժշկական անհրաժեշտության գոյության փաստը և նման որոշման մասով առկա են դատավարական երաշխիքներ, որոնք պահպանվել են (*Jalloh v. Germany* [GC], 2006, § 69):

բ. Հարկադիր կերակրում

848. Հարկադիր կերակրումը, որի նպատակն է փրկել ազատությունից զրկված անձի կյանքը, ով գիտակցաբար հրաժարվում է սնունդ ընդունելուց, տեսականորեն չի կարող համարվել անմարդկային կամ նվաստացնող: Այդուհանդերձ, Դատարանը պետք է համոզվի, որ համոզիչ կերպով ապացուցվել է բժշկական անհրաժեշտության առկայությունը և պահպանվել են հարկադիր կերակրման մասին որոշման դատավարական երաշխիքները (*Ciorap v. Moldova*, 2007, § 77): Ավելին, զանգատաբերին հացադուլի ընթացքում հարկադիր կերակրելու եղանակը չպետք է գերազանցի դաժանության նվազագույն աստիճանի շեմը, որը նախատեսված է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքով (*Nevmerzhitsky v. Ukraine*, 2005, § 94):

859. *Herczegfalvy v. Austria*, 1992, գործով, որը, *inter alia*, ներառում էր հոգեբուժական հաստատությունում գտնվող բուժառուի հարկադիր կերակրում, ով հրաժարվում էր սնունդ ընդունելուց, Դատարանը գտավ բժշկական անհրաժեշտությամբ հիմնավորված վերաբերմունք, որը չէր խախտել 3-րդ հոդվածը (§§ 79-84):

860. Համեմատության համար՝ Դատարանը գտավ, որ բանտային պայմանների դեմ բողոքի հացադուլի մեջ գտնվող բանտարկյալի հարկադիր կերակրումը պայմանավորված չէր հիմնավոր բժշկական պատճառներով, այլ նպատակ ուներ ստիպել նրան դադարեցնել բողոքը և արվել էր այնպիսի եղանակով, որն առանց անհրաժեշտության պատճառել էր նրան ուժեղ ֆիզիկական ցավ և նվաստացում, ինչը հավասարագոր էր խոշտանգման (*Ciorap v. Moldova*, 2007, § 89; տե՛ս նաև *Nevmerzhtsky v. Ukraine*, 2005, § 98):

871. Բավականին վերջերս, Դատարանը համարեց, որ պետական մարմինները ձախողել էին կազմակերպել զանգատարների բողոքի հացադուլը՝ հաշվի առնելով հացադուլը սկսելուց կարճ ժամանակ անց հարկադիր կերակրման բժշկական անհրաժեշտության բացակայությունը և իրականացման մասով իրավակարգավորումների բացակայությունն ու դատավարական երաշխիքների անկատարությունը: Քննության բացակայության պայմաններում Դատարանը չէր կարող բացառել, որ խնդրո առարկա հարկադիր կերակրման նպատակն էր ճնշել բողոքի ակցիաները տվյալ բանտում (*Yakovlyev v. Ukraine*, 2022, §§ 46-51):

գ. Հարկադիր հոգեբուժական բուժում

882. *Gorobet v. Moldova*, 2011, գործով Դատարանն արձանագրեց, որ զանգատարներին քառասունմեկ օր ազատությունից զրկելու և հիվանդանոցային պայմաններում հարկադիր հոգեբուժական բուժում նշանակելու բժշկական անհրաժեշտությունը բացակայում էր, ինչպես նաև, որ նման ապօրինի և կամայական վերաբերմունքը զանգատարների մոտ առաջացրել էր վախի, տառապանքի և թերարժեքության զգացում, որը հավասարագոր էր նվաստացնող վերաբերմունքի (§ 52):

893. Նույն օրինակով՝ թեև զանգատարների (ով ինքնասպանության փորձ էր կատարել) նախնական հարկադիր հոսպիտալացումը հիմնավոր էր, *Bataliny v. Russia*, 2015, գործով Դատարանը գտավ, որ չի ապացուցվել նրա հարկադիր հոսպիտալացումը և բուժումը շարունակելու, այդ թվում՝ ազատությունից զրկելու և նոր դեղամիջոցի գիտական հետազոտությանը մասնակցելու բժշկական անհրաժեշտությունը (§§ 88-91):

90. Համեմատության համար՝ *Naoumenko v. Ukraine*, 2004, §§ 113-116, գործով Դատարանը չգտավ ապացույցներ, որոնք ողջամիտ կասկածից վեր կհաստատեին, որ բանտում զանգատարների նկատմամբ նշանակված բուժումը, եթե նույնիսկ այն եղել է հարկադիր, հակասել է 3-րդ հոդվածին՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն փաստը, որ զանգատարներն ուներ ծանր հոգեկան խանգարումներ, երկու անգամ կատարել էր ինքնասպանության փորձ և ախտանիշները թեթևացնելու նպատակով ստանում էր դեղորայքային բուժում (տե՛ս նաև *Dvořáček v. The Czech Republic*, 2014, § 106, որտեղ զանգատարերը, *inter alia*, բողոքում էր սեռաբանական բուժման վերաբերյալ, որը ենթադրաբար նշանակվել էր առանց իր իրազեկված համաձայնության):

դ. Հարկադիր ամլացում և հղիության հարկադրված արհեստական ընդհատում (արորտ)

915. Դատարանը վճռել է, որ ամլացումը լուրջ միջամտություն է վերարտադրողական առողջությանը: Այն կարող է օրինական հիմքով իրականացվել խնդրո առարկա անձի խնդրանքով, օրինակ՝ որպես բեղմնականիսման մեթոդ կամ բուժական նպատակներով, եթե համոզիչ կերպով ապացուցվել է բժշկական անհրաժեշտությունը: Դատարանը, սակայն, գտել է, որ նման բժշկական միջամտության հարկադրումը՝ առանց գործունակ չափահաս բուժառուի համաձայնության, հակասում է մարդու ազատությունը և արժանապատվությունը հարգելու պահանջին, որը Կոնվենցիայի հիմնարար սկզբունքներից մեկն է (*V.C. v. Slovakia*, 2011, §§ 106-107):

926. *V.C. v. Slovakia*, 2011, գործով, որտեղ զանգատաբերը, ով գնչու էր, կեսարյան հատումով ծննդաբերելուց անմիջապես հետո ամլացվել էր առանց իր իրազեկված համաձայնության, Դատարանը եզրակացրել էր, որ, թեև չկար որևէ ապացույց, որ բուժաշխատողները գործել էին զանգատաբերի նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելու միտումով, այդուհանդերձ նրանք գործել էին կոպտորեն անտեսելով ինքնավարության և ընտրության նրա իրավունքը որպես բուժառու: Նման վերաբերմունքը, հետևաբար, խախտել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածը (§§ 106-120; տե՛ս նաև *N.B. v. Slovakia*, 2012, գործը, որտեղ Դատարանը գտել էր, որ անչափահաս զանգատաբերի ամլացումը չէր եղել կյանքը փրկելու միջամտություն և կատարվել էր առանց զանգատաբերի և/կամ նրա ներկայացուցչի իրազեկված համաձայնության: Նման միջամտությունը համարվել էր անհամատեղելի զանգատաբերի՝ որպես մարդու ազատությունը և արժանապատվությունը հարգելու պահանջի հետ (§§ 74-81) և, համեմատության համար, *Y.P. v. Russia*, 2022, գործը, որտեղ Դատարանը գտել էր, որ զանգատաբերի ամլացումն առանց նրա համաձայնության չէր հասել դաժանության պահանջվող աստիճանի, քանի որ կեսարյան հատման ընթացքում զանգատաբերի ամլացումը պայմանավորված էր եղել անսպասելի և անհետաձգելի իրավիճակում նրա առողջության և անվտանգության մասին բժիշկների իրական մտահոգություններով և լրացուցիչ տարրերի, օրինակ՝ զանգատաբերի առանձնակի խոցելիության բացակայությամբ (§§ 36-38):

937. *G.M. and Others v. the Republic of Moldova*, 2022, գործով, որտեղ զանգատաբերները հոգեբուժական հաստատությունում գտնվող մտավոր հաշմանդամություն ունեցող կանայք էին, ովքեր դարձել էին բժշկի բռնաբարության զոհ և ենթարկվել հղիության հարկադրված արհեստական ընդհատումների ու ծնելիության վերահսկման, Դատարանը գտավ, որ Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի ընդունած իրավական գործիքներում և գեկույցներում նշված է, որ հարկադրված արբորտը, ամլացումը և ծնելիության վերահսկումը գենդերային հիմքով բռնության ձևեր են (§ 88): Դատարանը, մասնավորապես արձանագրեց, որ քննարկվող նորմատիվ իրավական դաշտով՝ չէր նախատեսվում մտավոր հաշմանդամություն ունեցող անձանցից բժշկական միջամտության համար անհրաժեշտ վավեր, ազատ արտահայտված և նախնական համաձայնություն ստանալու երաշխավորված պահանջ, չէր սահմանվում մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, ընդհանրապես, և, մասնավորապես, կանանց՝ առանց նրանց համաձայնության բժշկական միջամտության ենթարկելու պարկտիկան կանխելու համարժեք քրեական օրենսդրություն, չէին նախատեսվում մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, ընդհանրապես, և, մասնավորապես, կանանց նկատմամբ բռնության նման դրսևորումները կանխելու այլ կառուցակարգեր (§ 128):

948. Երբ բժշկական չափանիշների խախտմամբ և խոցելի չափահաս երիտասարդի կամքին հակառակ՝ ծնողների պարտադրանքով, արբորտն արվել էր պետական հիվանդանոցում, Դատարանն արձանագրել էր, որ տվյալ վերաբերմունքը հակասում էր մարդու արժանապատվությանը և հանդիսանում անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի ծանրագույն ձև՝ նկատի առնելով դրա անմիջական և երկարատև ֆիզիկական ու հոգեբանական ազդեցությունը զանգատաբերի վրա (*S.F.K. v. Russia*, 2022, § 81):

Ե. Մարդու մարմնից թմրամիջոցներ և այլ ապացույցներ վերցնելը

959. Դատարանն ընդգծել է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ դա պայմանավորված չէ բժշկական անհրաժեշտության նկատառումներով, Կոնվենցիայի 3-րդ հոդվածը՝ որպես այդպիսին, չի արգելում հանցագործության կատարմանը կասկածյալի մասնակցության վերաբերյալ նրանից ապացույցներ ստանալու նպատակով բժշկական միջամտության դիմելը՝ նրա կամքին հակառակ: Սակայն, հանցագործության վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու նպատակով հարկադիր բժշկական միջամտության դիմելը պետք է համոզիչ կերպով հիմնավորվի կոնկրետ գործի փաստերով: Սա հատկապես վերաբերելի է, երբ միջամտության նպատակն անհատի մարմնից այն հանցագործության իրեղեն ապացույցները ստանալն է, որում նա կասկածվում է: Նման գործողության առանձնակի ինվազիվ բնույթը պահանջում է առնչվող բոլոր հանգամանքների մանրակրկիտ քննություն: Այս կոնտեքստում պատշաճ ուշադրության պետք է արժանանա տվյալ հանցագործության ծանրության աստիճանը: Իշխանությունները պետք է նաև ցուցադրեն, որ դիտարկել են ապացույցները ստանալու այլընտրանքային

մեթոդներ: Ավելին, միջամտությունը չպետք է առաջացնի կասկածյալի առողջությունը տևականորեն վատթարացնելու որևէ վտանգ (*Jalloh v. Germany* [GC], 2006, §§ 70-71):

100. Ավելին, ինչպես բուժական նպատակներով իրականացվող միջամտությունների պարագայում, այնպես էլ անձի մարմնից ապացույց ստանալու նպատակով նրան հարկադիր բժշկական պրոցեդուրայի ենթարկելու եղանակը չպետք է գերազանցի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի մասով Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված դաժանության նվազագույն աստիճանը: Առնչվող վերաբերելի գործոններն են. արդյո՞ք հարկադիր բժշկական միջամտության արդյունքում խնդրո առարկա անձը վերապրել է լուրջ ֆիզիկական ցավ կամ տառապանք, արդյո՞ք հարկադիր բժշկական միջամտությունը նշանակել և իրականացրել են բժիշկներ, արդյո՞ք խնդրո առարկա անձը եղել է մշտական բժշկական հսկողության տակ, արդյո՞ք հարկադիր բժշկական միջամտությունը հանգեցրել է զանգատաբերի առողջական վիճակի վատթարացման և տևական հետևանքներ ունեցել նրա առողջության համար (*Jalloh v. Germany* [GC], 2006, §§ 72-74):

961. Օրինակ, Դատարանն արձանագրեց, որ զանգատաբերը ենթարկվել էր 3-րդ հոդվածը խախտող անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի, երբ ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների խախտման հետ կապված հանցագործությանը զանգատաբերի մասնակցությունը պարզելու նպատակով մեզի փորձանմուշ վերցնելու համար ոստիկանության բաժնում նրան ենթարկել էին հարկադիր կաթետավորման: Այս առնչությամբ Դատարանը նշեց, որ իշխանությունները ստացել էին նույն ապացույցը՝ վերցնելով նաև զանգատաբերի արյան նմուշը, և որ միջամտության եղանակը պատճառել էր նրան ֆիզիկական ցավ և հոգեկան տառապանք (*R.S. v. Hungary*, 2019, § 72; համեմատության համար տե՛ս *Schmidt v. Germany* (dec.), 2006, որտեղ հանցագործությանը կասկածյալի մասնակցությունը պարզելու նպատակով նրանից՝ իր կամքին հակառակ, արյան և թքի նմուշներ վերցնելը չէր հատել 3-րդ հոդվածով պահանջվող դաժանության նվազագույն աստիճանը):

III. Պաշտպանությունը ոչ պետական սուբյեկտների իրականացրած խոշտանգումից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից

Կոնվենցիայի 3-րդ հոդված

«Ոչ որ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ա. Պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակը

972. Թեև Կոնվենցիայի ներքո Պայմանավորվող կողմն ուղղակի պատասխանատվություն չի կրում մասնավոր անհատների արարքների (*Beganović v. Croatia*, 2009, § 68) կամ որպես մասնավոր անձ գործող պետության ներկայացուցիչների համար (*Çevik v. Turkey*, (no.2), 2010, § 33), Դատարանը համարել է, որ պետության պատասխանատվության հարց, այդուհանդերձ, կարող է առաջանալ Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պարտավորության հետևանքով:

983. Այս առնչությամբ Դատարանը գտել է, որ իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի Կոնվենցիայով սահմանված իրավունքները և ազատությունները երաշխավորելու պարտավորությունը, որը դրված է Բարձր պայմանավորվող կողմերի վրա Կոնվենցիայի 1-ին հոդվածով՝ 3-րդ հոդվածի հետ համակցությամբ, պետություններից

պահանջում է ձեռնարկել միջոցներ, որոնք երաշխավորում են, որ իրենց իրավագործության տակ գտնվող անհատները չեն ենթարկվի խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, այդ թվում՝ մասնավոր անհատների կողմից վատ վերաբերմունքի (*Z and Others v. the United Kingdom* [GC], 2001, § 73 և *O’Keeffe v. Ireland* [GC], 2014, § 144):

994. Մասնավորապես, երեխաները և այլ խոցելի անհատներն ունեն արդյունավետ պաշտպանության իրավունք (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 177 և *R.B. v. Estonia*, 2021, § 78):

1005. Այս առնչությամբ Գատարանի մշտական մոտեցումն է եղել նաև այն, որ 3-րդ հոդվածը պետությունների վրա է դնում իշխանությունների հսկողության տակ լինելու հետևանքով խոցելի վիճակում հայտնված անձանց, օրինակ՝ ազատությունից զրկվածների կամ գորակոչված զինծառայողների, ֆիզիկական բարօրությունը պաշտպանելու խնդիրը (*Premiminy v. Russia*, 2011, § 73):

1016. Գատարանը քննության է առել մի շարք տարբեր կոնտեքստներում վատ վերաբերմունքից պաշտպանելու պետության պոզիտիվ պարտավորությունը: Օրինակ՝

- Երեխաների նկատմամբ բռնության կոնտեքստում (տե՛ս, օրինակ, *A. v. the United Kingdom*, 1998; *Z and Others v. the United Kingdom* [GC], 2011; *Association Innocence en Danger and Association Enfance et Partage v. France*, 2020).
- Ընտանեկան բռնության կոնտեքստում (տե՛ս, օրինակ, *T.M. and C.M. v. the Republic of Moldova*, 2014; *Talpis v. Italy*, 2017; *Volodina v. Russia*, 2019, և կիրառությունից մասով տե՛ս *Buturugă v. Romania*, 2020, §§ 74, 78-79).
- Մեռական բնույթի հանցագործությունների կոնտեքստում (տե՛ս, օրինակ, *M.C. v. Bulgaria*, 2003; և անչափահասների մասով տե՛ս *I.C. v. Romania*, 2016; *M.G.C. v. Romania*, 2016).
- Բանտարկյալների միջև կոնֆլիկտների կոնտեքստում (տե՛ս, օրինակ, *Pantea v. Romania*, 2003; *Rodić and Others v. Bosnia and Herzegovina*, 2008; և *D.F. v. Latvia*, 2013).
- Ցույցերի կոնտեքստում (տե՛ս, օրինակ, *Identoba and Others v. Georgia*, 2015, §§ 72-74, § 81; և *Women’s Initiatives Supporting Group and Others v. Georgia*, 2021, §§ 70-78).
- Հաշմանդամություն ունեցող անձին ֆիզիկական և բանավոր հետամտման ենթարկելու կոնտեքստում (տե՛ս *Dorđević v. Croatia*, 2012).
- Անչափահասին (տե՛ս *V.K. v. Russia*, 2017) կամ տարեց անձին (տե՛ս *Irina Smirnova v. Ukraine*, 2016) ֆիզիկական և բանավոր հետամտման ենթարկելու կոնտեքստում.
- Ատելության հիմքով կատարված բռնության կոնտեքստում (տե՛ս, օրինակ, *Škorjanec v. Croatia*, 2017; *Burlya and Others v. Ukraine*, 2018).
- Չինված ուժերում ոչ կանոնադրական հարաբերությունների և ծաղրուծանակի ենթարկելու կոնտեքստում (տե՛ս, օրինակ, *Filippov v. Russia*, 2022):

Բ. Պետության պոզիտիվ պարտավորությունների բնույթը

1027. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պետության վրա դրված նյութական պոզիտիվ պարտավորություններն ընդգրկում են. առաջին՝ պաշտպանության նորմատիվ իրավական բազա ապահովելու պարտավորություն, երկրորդ՝ որոշակի հստակ սահմանված հանգամանքներում, այս դրույթին հակասող վերաբերմունքի վտանգից որոշակի անհատների պաշտպանելու նպատակով օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 178):

1. Պատշաճ նորմատիվ իրավական բազա ձևավորելու պարտավորություն

1038. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտավորությունն առաջացնում է, մասնավորապես, նորմատիվ իրավական բազա ստեղծելու անհրաժեշտություն, որը քրեական օրենսդրության նորմերի ամրագրման և գործնականում դրանց արդյունավետ կիրառման միջոցով համարժեքորեն կաշտպանի խախտումներից անհատների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, հատկապես՝ ամենաձանր դեպքերում (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 179):

1049. Այս պարտավորությունն առանձնակի կարևորություն է ստանում պետական այն ծառայության կոնտեքստում, որի խնդիրն է պաշտպանել երեխաների առողջությունը և բարօրությունը, հատկապես, երբ երեխաներն առանձնապես խոցելի են և գտնվում են իշխանությունների բացառիկ վերահսկողության տակ: Որոշ հանգամանքներում դա կարող է պահանջել հատուկ միջոցների և երաշխիքների ընդունում: Այս առնչությամբ Դատարանը՝ երեխայի նկատմամբ սեռական բռնության գործերի առնչությամբ, հստակ սահմանել է, որ, հատկապես այն դեպքերում, երբ բռնարարն իշխանություն ունի երեխայի վրա, բացահայտման և հաղորդման արդյունավետ մեխանիզմների առկայությունը հիմնարար նշանակություն ունի վերաբերելի քրեական օրենքներն արդյունավետ կիրառելու համար (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 180):

105. Նույն կերպ, ընտանեկան բռնության կոնտեքստում Դատարանը վճռել է, որ այս պարտավորությունը, սովորաբար, ազգային իշխանություններից պահանջում է ձեռնարկել հատուկ միջոցներ քրեական օրենսդրության առարկա հանդիսացող պաշտպանության ոլորտում: Նման միջոցներն ընդգրկում են, մասնավորապես, ընտանիքում բռնարարքների քրեականացումը՝ ապահովելով արդյունավետ, համաչափ և գապող պատժամիջոցներ (*Volodina v. Russia*, 2019, § 78): Բացի այդ, ինչ վերաբերում է պաշտպանության միջոցներին, Դատարանը պահանջում է, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավական և օպերատիվ միջոցների գործիքակազմն ապահովի համապատասխան մարմիններին բավարար միջոցներով, որոնցից հնարավոր կլինի ընտրել տվյալ գործի հանգամանքներում գնահատված վտանգի աստիճանին համարժեք և համաչափ միջոցներ (*Tunikova and Others v. Russia*, 2021, § 95):

2. Կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պարտականություն

1061. Ինչպես Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պարագայում, 3-րդ հոդվածը, որոշակի հանգամանքներում, կարող է պահանջել պետությունից ձեռնարկել տուժողին կամ հնարավոր տուժողներին վատ վերաբերմունքից պաշտպանելու օպերատիվ միջոցներ (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 181):

1072. Պաշտպանելու պոզիտիվ պարտավորությունը պետք է մեկնաբանել այնպես, որ այն չափազանց բեռ չառաջացնի իշխանությունների համար՝ հաշվի առնելով, մասնավորապես, մարդկային վարքի անկանխատեսելիությունը և օպերատիվ միջոցների ընտրությունը, որը պետք է կատարվի առաջնահերթություններից և ռեսուրսներից ելնելով: Համապատասխանաբար, վատ վերաբերմունքի յուրաքանչյուր վտանգ չպետք է առաջացնի իշխանությունների համար այդ ռիսկի իրագործումը կանխող միջոցներ ձեռնարկելու կոնվենցիոն պարտավորություն: Սակայն պահանջվող միջոցները պետք է առնվազն ապահովեն արդյունավետ պաշտպանություն, մասնավորապես՝ երեխաների և խոցելի այլ անձանց համար, նաև ներառեն այն վատ վերաբերմունքը կանխելու ողջամիտ քայլեր, որի մասին իշխանություններն իմացել կամ պարտավոր էին իմանալ (*O’Keeffe v. Ireland* [GC], 2014, § 144):

1083. Հետևաբար, պոզիտիվ պարտավորություն առաջանալու համար, պետք է ապացուցվի, որ երրորդ անձի հանցավոր արարքների հետևանքով ինքնությունը հայտնի անհատին վատ վերաբերմունքի ենթարկելու իրական և անմիջական վտանգի գոյության ժամանակ իշխանություններն իմացել կամ պարտավոր էին իմանալ այդ մասին և իրենց լիազորությունների շրջանակում չեն ձեռնարկել միջոցներ, որոնք, ողջամտորեն դատելով, կարող էին կանխել այդ վտանգը (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 183):

1094. Դատարանը նշում է, որ այս կոնտեքստում, վտանգի բնույթի և աստիճանի գնահատումը կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պարտականության անբաժանելի մաս է, եթե վտանգի առկայությունը պահանջում է նման միջոցներ: Հետևաբար, պետության՝ նշված պարտավորությանը համապատասխան գործելու հարցը քննելիս հարկ է վերլուծել թե՛ պետական մարմինների կողմից իրականացված վտանգի գնահատման համարժեքությունը, թե՛ ձեռնարկված կանխարգելիչ միջոցների համարժեքությունը, երբ բացահայտվել կամ պարտավոր էր բացահայտվել գործողություն պահանջող համապատասխան վտանգ (*Kurt v. Austria* [GC], 2021, § 159, թեև Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո):

1105. Դատարանը նաև ընդգծել է, որ անհրաժեշտ չէ ապացուցել, որ վատ վերաբերմունք տեղի չէր ունենա, եթե չլիներ պետության անգործությունը: Ողջամտորեն հասանելի միջոցներ չձեռնարկելը, որոնք ունեին արդյունքը փոխելու իրական հնարավորություն կամ կարող էին մեղմել վնասը, բավարար է պետության պատասխանատվությունն առաջացնելու համար (*O’Keeffe v. Ireland* [GC], 2014, § 149):

Գ. Որոշ օրինակներ

1116. Դատարանը գտել է, որ պատասխանող պետությունը չի կատարել վատ վերաբերմունքից անձանց պաշտպանելու իր պարտավորությունը, երբ՝

- կալանավայրի վարչակազմը չի կանխել խցակիցների կողմից կանոնավոր վատ վերաբերմունքը կալանավորված անձի նկատմամբ (*Premininny v. Russia*, 2011, § 90; տե՛ս նաև *I.E. v. the Republic of Moldova*, 2020, § 46, երբ մտավոր հաշմանդամություն ունեցող անչափահասին տեղավորել են մարդու դեմ ուղղված հանցագործություն կատարած իրավախախտների հետ նույն խցում, որտեղ նա ենթարկվել է ծեծի և բռնաբարության).
- ներպետական օրենսդրությունը չի սահմանել ընտանեկան բռնությունը որպես առանձին հանցագործություն կամ այլ հանցագործությունների ծանրացուցիչ հանգամանք, նաև չի սահմանել հանրային քրեական հետապնդում նախաձեռնելու համար պահանջվող վնասվածքների ծանրության նվազագույն շեմ, իսկ իշխանությունները չեն ձեռնարկել զանգատաբերին պաշտպանելու կանխարգելիչ օպերատիվ միջոցներ (*Volodina v. Russia*, 2019, § 85 և § 91; տե՛ս նաև *M.C. v. Bulgaria*, 2003, § 166, որտեղ Դատարանը գտավ, որ ներպետական նորմատիվ իրավական բազան բավարար պաշտպանություն չի տրամադրել ենթադրյալ բռնաբարության գոհին).
- իշխանությունները թերացել են պաշտպանել խոցելի կրոնական փոքրամասնության անդամին կանոնավոր թիրախավորումից (*Milanović v. Serbia*, 2010, § 90; տե՛ս նաև *Members of the Gldani Congregation of Jehovah’s Witnesses and Others v. Georgia*, 2007, §§ 100-105 և § 124, որտեղ ոստիկանությունը բավարար միջոցներ չէր ձեռնարկել Եհովայի վկաների հավաքի վրա Ուղղափառ եկեղեցու անդամների շարունակվող հարձակման դեմ, թեև զգուշացվել էր բավականին վաղ փուլում, որ ձեռնարկեր բռնությանը վերջ դնելու և տուժողներին պաշտպանելու հրատապ միջոցներ).
- զինված ուժերի հրամանատարական կազմը թերացել էր պաշտպանել զանգատաբերի որդուն ծառայակիցների վրեժխնդրությունից, ով տուժել էր բանակում ոչ կանոնադրական հարաբերություններից և ազդարարել այդ մասին (*Filippov v. Russia*, 2022, § 103):

1127. Համեմատության համար՝ *X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 183, գործով, որն առնչվում էր մանկատանը սեռական բռնության մեղադրանքներին, Դատարանը համարել է, որ նորմատիվ իրավական հիմքերի կիրառման եղանակը չէր առաջացրել 3-րդ հոդվածի խախտում, քանի որ, մասնավորապես, չէր հաստատվել գիշերօթիկ հաստատություններում մանկահասակ երեխաների նկատմամբ սեռական բռնության համակարգային խնդիր: Դատարանը նաև գտավ, որ, գործի փաստական հանգամանքներում չկային բավարար տեղեկություններ հաստատելու համար, որ Բուլղարիայի իշխանություններն իմացել կամ պարտավոր էին իմանալ զանգատաբերներին վատ վերաբերմունքի ենթարկելու իրական և անմիջական վտանգի մասին,

ինչը կարող էր առաջացնել նման վտանգից նրանց պաշտպանելու վերը նշված պարտավորությունը:

IV. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին մեղադրանքները քննելու պարտականությունը

Կոնվենցիայի 3-րդ հոդված

«Ոչ որ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ա. Դատավարական պարտավորությունների շրջանակը

1138. Երբ որևէ անհատ ներկայացնում է հիմնավոր բողոք, որ պետության ներկայացուցիչները ենթարկել են իրեն 3-րդ հոդվածի պահանջները խախտող վերաբերմունքի, այդ նորմը՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածում սահմանված «իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ... Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատություններն» ապահովելու պետության ընդհանուր պարտականության հետ համակցությամբ, պահանջում է իրականացնել արդյունավետ պաշտոնական քննություն (*Assenov and Others v. Bulgaria*, 1998, § 102 և *El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia* [GC], 2012, § 182): Հակառակ դեպքում, խոշտանգման և անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի և պատժի ընդհանուր իրավական արգելքը՝ չնայած դրա հիմնարար կարևորությանը, գործնականում կլինի անարդյունավետ և պետության ներկայացուցիչները, որոշ դեպքերում, կկարողանան փաստացի անպատժելիորեն խախտել իրենց հսկողության տակ գտնվող անձանց իրավունքները (*Labita v. Italy* [GC], 2000, § 131):

1149. Վերոնշյալի առնչությամբ Դատարանն ընդգծել է, որ իշխանությունների՝ իրավունքի գերակայությանը հավատարիմ լինելու հարցում հանրային վստահությունը պահպանելու և ապօրինի արարքների նկատմամբ հանդուրժողականությունը կանխելու համար կենսական նշանակություն ունի իշխանությունների պատշաճ մոտեցումը ոստիկանության կամ պետության համանման ներկայացուցիչների վատ վերաբերմունքի մասին յուրջ մեղադրանքների քննության իրականացմանը 3-րդ հոդվածի չափանիշներին համապատասխան (*Lyapin v. Russia*, 2014, § 139):

11520. Դատավարական այս պարտավորությունը տարածվում է նաև մասնավոր անհատների կողմից դրսևորված վատ վերաբերմունքի առնչությամբ ներկայացված մեղադրանքները քննելու պահանջի վրա, երբ դրանք «հիմնավոր» են (*M. and Others v. Italy and Bulgaria*, 2012, § 100 և *X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 184; տե՛ս նաև *Ghișoiu v. Romania*, (dec.), 2023, §§ 62-64, որտեղ դատավարական պարտավորությունների ծագման հիմք չի եղել, քանի որ անչափահասի նկատմամբ ենթադրյալ բռնության կոնտեքստում հիմնավոր բողոք չի ներկայացվել):

Բ. Քննության նպատակը

1161. Քննության կարևորագույն նպատակն է երաշխավորել խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատժի արգելող ներպետական օրենքների արդյունավետ կիրառումն այն դեպքերում, երբ ներգրավված են պետության ներկայացուցիչներ կամ մարմիններ, և ապահովել նրանց պատասխանատվությունն իրենց հսկողության ներքո տեղի ունեցած վատ վերաբերմունքի դեպքերի համար (*Bouyid v. Belgium* [GC], 2015, § 117):

Գ. Ուսումնասիրության բնույթը և աստիճանը

1172. Ուսումնասիրության բնույթը և աստիճանը, որոնք բավարարում են քննության արդյունավետության նվազագույն շեմը, պայմանավորված են կոնկրետ գործի հանգամանքներով: Դրանք պետք է գնահատվեն բոլոր վերաբերելի փաստերի հիման վրա և հաշվի առնելով քննչական գործի պրակտիկ իրողությունները (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 190):

1183. Օրինակ, այն դեպքերում, երբ սեռական բռնության հավանական տուժողները երեխաներ են եղել, համապատասխանությունը 3-րդ հոդվածից բխող պոզիտիվ պարտավորություններին պահանջում է, որ ներպետական դատավարության կոնտեքստում որպես առաջնահերթ հաշվի առնվի երեխաների՝ լավագույն շահի իրավունքի արդյունավետ իրացումը և համաժեքորեն հասցեագրվեն նրանց առանձնակի խոցելիությունը և համապատասխան կարիքները՝ երկրորդային գոհականացումից նրանց պաշտպանելու համար (*B v. Russia*, 2023, § 54): Մասնավորապես, նման դեպքերում 3-րդ հոդվածից բխող դատավարական պարտավորությունը պետք է մեկնաբանվի կիրառելի այլ միջազգային գործիքներից առաջացող պարտավորությունների և, ավելի կոնկրետ, «Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի («Լանգարոտելի կոնվենցիա») լույսի ներքո (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 192):

1194. Նույն կերպ, Դատարանը մի գործի շրջանակներում ընդգծել է, որ, երբ ինցեստի (բռնաբարության) տուժողը ստացել է մահվան սպառնալիքներ բռնարարից, իշխանությունները, որոնք տեղյակ են եղել տուժողի սեռով, էթնիկ ծագումով և նախկինում ստացած տրավմաներով պայմանավորված նրա առանձնակի խոցելիության մասին, պետք է անհապաղ և արդյունավետ արձագանքեին հանցագործության մասին նրա հաղորդումներին և պաշտպանեին նրան այդ սպառնալիքների իրագործումից, ինչպես նաև ահաբեկումից, վրեժխնդրությունից և կրկնագոհականացումից (*J.I. v. Croatia*, 2023, § 97):

Դ. Քննության չափանիշները

1. Նախնական դիտարկումներ

1205. *S.M. v. Croatia*, [GC], 2020, §§ 311-320, գործով Դատարանն ամփոփել է իր նախադեպային իրավունքը դատավարական պարտավորության վերբերյալ Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածների համընկնող սկզբունքների ներքո: Դատարանը նշել է, որ թեև պետության պոզիտիվ պարտավորությունների ընդհանուր շրջանակը կարող է տարբերվել պետության ներկայացուցիչների մասնակցությամբ Կոնվենցիային հակասող վերաբերմունք դրսևորելու և մասնավոր անհատների կողմից բռնության ենթարկելու գործերի միջև՝ դատավարական պահանջները նույնանման են (*Sabalić v. Croatia*, 2021, § 96):

1216. Մասնավորապես, ինշխանությունները պարտավոր են գործել պաշտոնական բողոք ներկայացվելու պահից: Մակայն, նույնիսկ կոնկրետ բողոքի բացակայության դեպքում, հարկ է իրականացնել քննություն, եթե կան այլ բավականաչափ հստակ նշաններ, որոնք վկայում են հնարավոր խոշտանգման կամ վատ վերաբերմունքի մասին: Իշխանությունները պետք է գործեն սեփական նախաձեռնությամբ, երբ խնդիրը հայտնվել է իրենց ուշադրության դաշտում (*Gldani Congregation of Jehovah's Witnesses and Others v. Georgia*, 2007, § 97):

1227. 3-րդ հոդվածով նախատեսված դատավարական պարտավորությունը շարունակում է գործել բարդ անվտանգային պայմաններում, այդ թվում՝ զինված հակամարտության կոնտեքստում: Նույնիսկ, երբ քննություն կատարելու պարտավորության հանգեցնող իրադարձությունները տեղի են ունենում համընդհանուր բռնության պայմաններում և քննիչները հանդիպում են դժվարությունների և խոչընդոտների, որոնք ստիպում են օգտագործել քննության պակաս արդյունավետ միջոցներ կամ հետաձգել քննությունը, փաստը մնում է փաստ, որ 3-րդ հոդվածը պահանջում է ձեռնարկել ողջամիտ բոլոր քայլերը, որոնք կերաշխավորեն արդյունավետ և անկախ քննության իրականացումը (*Mocanu and Others v. Romania* [GC], 2014, § 319):

1238. Վերջապես, 3-րդ հոդվածի դատավարական պահանջին, որը համընկնում է 2-րդ հոդվածի պահանջների հետ, համապատասխանությունը գնահատելու պարամետրերը գնահատվում են մի շարք կարևորագույն պարամետրերի հիման վրա, որոնք են. քննչական միջոցառումների համարժեքությունը, տուժողի մասնակցությունը քննությանը և քննության անկախությունը: Այս տարրերը փոխկապակցված են և, առանձին վերցված, դրանցից յուրաքանչյուրը չի հանդիսանում ինքնանպատակ: Դրանք չափորոշիչներ են, որոնք՝ միասին վերցված, հնարավորություն են տալիս գնահատել քննության արդյունավետության աստիճանը (*R.R. and R.D. v. Slovakia*, 2020, § 178, տե՛ս նաև *Mustafa Tunç and Fecire Tunç v. Turkey* [GC], 2015, § 225 2-րդ հոդվածի առնչությամբ):

2. Անկախություն

1249. Որպեսզի քննությունը լինի արդյունավետ՝ դրա իրականացման համար պատասխանատու մարմինները և անհատները պետք է անկախ լինեն նրանցից, ում դեմ այն ուղղված է: Սա նշանակում է ոչ միայն հիերարխիկ կամ ինստիտուցիոնալ կապերի բացակայություն, այլև գործնական անկախություն (*Bouyid v. Belgium* [GC], 2015, § 118).

12530. Այս իմաստով, կիրառելի պահանջները նախատեսում են քննության անկախության հստակ ամբողջական, այլ ոչ թե վերացական գնահատում: Ավելին, դրանք չեն պահանջում, որ քննության համար պատասխանատու մարմինները և անհատներն ունենան բացարձակ անկախություն, այլ բավարար անկախ լինեն այն անհատներից և կառույցներից, որոնք, հավանաբար, ենթարկվելու են պատասխանատվության: Հետևաբար, անկախության աստիճանի համարժեքությունը գնահատվում է բոլոր հանգամանքների լույսի ներքո, որոնք անխուսափելիորեն առանձնահատուկ են առանձին վերցված յուրաքանչյուր գործի դեպքում (*M.B. and Others v. Slovakia*, 2021, § 91):

1261. Դատարանը գտել է, որ խնդրո առարկա քննությունն անկախ չի եղել, երբ՝

- քննիչները եղել են զինվորական դատախազներ, ովքեր, ինչպես մեղադրյալները (որոնցից երկուսը գեներալներ էին), սպաներ էին և զինվորական ստորակարգությամբ ենթակայության հարաբերության մեջ էին (*Mocanu and Others v. Romania* [GC], 2014, § 333).
- քննությունը վարող դատախազը նաև պաշտոնապես քրեական մեղադրանք էր ներկայացրել զանգատաբերին և ներկայացրել նրան կալանավորելու միջնորդություն (*Boicenco v. Moldova*, 2006, § 124).
- քննչական մարմինը քննության մի կարևոր և էական մաս՝ մեղաագրվող վատ վերաբերմունքը կատարած հանցագործների նույնականացումը, պատվիրակել էր այն մարմնին, որի գործակալները ենթադրաբար կատարել էին հանցագործությունը, իսկ հետագայում՝ չձեռնարկելով որևէ լրացուցիչ գործողություններ, հիմնվել այդ մարմնի եզրակացության վրա, որ հնարավոր չի եղել նույնականացնել խնդրո առարկա ոստիկաններին (*Najafli v. Azerbaijan*, 2012, §§ 52-54; տե՛ս նաև *Bursuc v. Romania*, 2004, § 104, որտեղ ապացույցները հավաքել և վկաներին հարցաքննել էին ոստիկանության տվյալ քաղաքի այն ստորաբաժանման աշխատակիցները, որի ոստիկանների մասով էլ իրականացվում էր քննությունը).
- Ներքին գործերի նախարարության խոսնակը, որը ներկայացնում էր քննության համար պատասխանատու քննիչի գործատուին, քրեական վարույթ նախաձեռնելուց երեք օր անց և չսպասելով քննության եզրակացություններին, հայտարարել էր լրատվամիջոցներով, որ ոստիկանությունը վատ վերաբերմունք չի ցուցաբերել զանգատաբերի նկատմամբ և նրա մեղադրանքները սուտ են եղել (*Emin Huseynov v. Azerbaijan*, 2015, § 74).
- քննիչների վարքը չի ապահովել անհրաժեշտ թափանցիկություն և առերևույթ անկախություն, քանի որ նրանք ինքնուրույն քայլեր չեն նախաձեռնել, օրինակ՝ չեն հարցաքննել երկրորդ զանգատաբերին, ներգրավված աշխատակիցներին և ակնատեսներին, նաև չեն կարգադրել իրականացնել երկրորդ զանգատաբերի վնասվածքների դատաբժշկական փորձաքննություն (*Durđević v. Croatia*, 2011, §§ 89-90).

- քննիչները քրեական գործի հանգամանքները պարզել են, հիմնվելով բացառապես և առանց որևէ հիմնավորման իրադարձությունների այն վարկածի վրա, որը ներկայացրել են ոստիկանության աշխատակիցները, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործները և նրանց գործընկերները, ովքեր ինչ-որ կերպ մասնակցել են խնդրո առարկա իրադարձություններին՝ չստելով զանգատաբերին կամ այլ վկաների (*Virabyan v. Armenia*, 2012, §§ 165-167; տե՛ս նաև *Suleymanov v. Russia*, 2013, § 144).
- երբ դատախազությունը օգնություն է խնդրել ոստիկաններից, ովքեր ենթարկվում էին հրամանատարական նույն շղթային, ինչ այն ոստիկանները, ում մատով իրականացվում էր քննություն (*Baranin and Vukčević v. Montenegro*, 2021, § 144):

1272. Մյուս կողմից, Դատարանը խնդրահարույց չի համարել քննության անկախությունը հետևյալ հանգամանքներում՝

- կասկածվող վարչական մարմինը կամ դրա աշխատակիցները որևէ առնչություն չունեին տվյալ գործին, և չկային նրանց անկախության բացակայության մասին վկայող ապացույցներ (*X and others v. Bulgaria* [GC], 2021, § 207).
- քննությունն իրականացրել էր ոչ միայն դատական մարմինը քրեական դատավարության շրջանակում, այլև անկախ վարչական մարմին, որը համապատասխանել էր անկախության բոլոր երաշխիքներին (*P.M. and F.F. v. France*, 2021, § 71).
- քննությունն իրականացրել էր Գլխավոր դատախազությունը, որը թե՛ հիերարխիկ, թե՛ ինստիտուցիոնալ առումներով անկախ էր քննությամբ անցնողներից: Դատախազությունն ինքն էր իրականացրել քննչական բոլոր գործողությունները և չէր հիմնվել այն անձանց բացահայտած փաստերի վրա, ովքեր կարող էին չունենալ պահանջվող հիերարխիկ կամ ինստիտուցիոնալ անկախությունը (*V.D. v. Croatia (no. 2)*, 2018, § 69):

3. Համարժեքություն

1283. «Արդյունավետ» լինելու համար քննությունը պետք է լինի համարժեք: Սա նշանակում է, որ այն պետք է հանգեցնի փաստերի բացահայտման և պարզի, թե տվյալ հանգամանքներում ուժի գործադրումն արդարացված էր, թե ոչ, ինչպես նաև նույնականացնի և, եթե տեղին է, պատասխանատվության ենթարկի մեղավորներին (*Labita v. Italy* [GC], 2000, § 131 և *Jeronovičs v. Latvia* [GC], 2016, § 103): Հակառակ դեպքում, խոշտանգման և անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի և պատժի ընդհանուր իրավական արգելքը՝ չնայած դրա հիմնարար կարևորությանը, գործնականում կլինի անարդյունավետ և պետության ներկայացուցիչները, որոշ դեպքերում, կկարողանան փաստացի անպատժելիորեն խախտել իրենց հսկողության տակ գտնվող անձանց իրավունքները (*Cestaro v. Italy*, 2015, § 204):

1294. Քննությունը պետք է լինի բազմակողմանի, ինչը նշանակում է, որ իշխանությունները պետք է միշտ լուրջ ջանք գործադրեն, որ բացահայտեն տեղի ունեցածը և չպետք է հիմնվեն հապճեպ կամ անհիմն եզրակացությունների վրա՝ քննությունն ավարտելու կամ որպես իրենց որոշումների հիմք օգտագործելու համար: Իշխանությունները պետք է ձեռնարկեն իրենց հասանելի ողջամիտ բոլոր քայլերը՝ միջադեպին առնչվող ապացույցները, այդ թվում, *inter alia*, ականատես վկաների ցուցմունքները և դատափորձագիտական ապացույցները ձեռք բերելու համար: Քննության որևէ թերություն, որը կասկածի տակ է դնում վնասվածքների առաջացման պատճառը պարզելու կամ պատասխանատու անհատներին բացահայտելու դրա ունակությունը կարող է առաջացնել այս չափանիշը խախտելու վտանգ (*El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia* [GC], 2012, § 183):

1305. Դատարանը գտել է, որ խնդրո առարկա քննությունը համարժեք չի եղել, երբ՝

- քննչական մարմինը հիմնականում հիմնվել է ենթադրյալ հանցագործների և ոստիկանության այլ աշխատակիցների ցուցմունքների, ինչպես նաև ոստիկանության ներքին արձանագրությունների վրա՝ անտեսելով ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի մասին զանգատաբերի պնդումները (*M.F. v. Hungary* 2017, § 55; տե՛ս նաև *Archip v. Romania*, 2011, §§ 66-71, որտեղ դատարանը՝ առանց փաստական

հանգամանքների մասին մանրամասներ ներկայացնելու և առանց միջադեպի փաստերն ու հանգամանքները մանրակրկիտ դիտարկելու հանգել էր եզրակացության, իսկ քննչական մարմիններն ապացույցների գնահատման հարցում դրսևորել էին ընտրողական և որոշ չափով ոչ հետևողական մոտեցում)։

- պատկան մարմինները դրսևորել էին անգործություն և չէին իրականացրել պաշտոնական քննություն, թեև նրանց ուշադրության էին ներկայացվել վատ վերաբերմունքի մասին արժանահավատ պնդումներ (*M.S. v. Croatia (no. 2)*, 2015, §§ 81-84; տե՛ս նաև *Hovhannisyán v. Armenia*, 2018, §§ 58-59)։
- վատ վերաբերմունքի ենթարկած հանցագործներից մեկը պաշտոնապես չէր նույնականացվել և նրան մեղադրանք չէր առաջադրվել, թեև գանգատաբերը նույնականացրել էր նրան (*Barovov v. Russia*, 2021, § 39; տե՛ս նաև *Ochigava v. Georgia*, 2023, § 59, որտեղ իշխանությունները չէին քննել քրեկատարողական բարձրաստիճան ծառայողների մասնակցությունը մի գործով, որի շրջանակներում քրեկատարողական յոթ ծառայողներ մեղավոր էին ճանաչվել բանտարկյալներին, այդ թվում՝ գանգատաբերին սխտեմատիկ վատ վերաբերմունքի ենթարկելու համար)։
- ազգային իշխանությունները չէին նույնականացրել և հարցաքննել հատուկ ստորաբաժանման ոստիկաններին, որվքեր կրել էին դիմակներ և չէին ունեցել նույնականացման համարներ կամ տառեր և մասնակցել էին բնակարանի խուզարկությանը, որի ընթացքում, գանգատաբերի պնդմամբ, նա ենթարկվել էր վատ վերաբերմունքի (*Hristovi v. Bulgaria*, 2011, § 91)։
- պատկան մարմինները թույլ էին տվել դատավարական սխալներ, որոնք հանգեցրել էին ապացույցների հիմնական մասի անթույլատրելիության և փակուղի մտցրել քրեական վարույթը (*Maslova and Nalbandov v. Russia*, 2008, §§ 92-97)։

1316. Մյուս կողմից, նկատի առնելով ազգային իշխանությունների կատարած զանազան քայլերը, Դատարանը խնդրահարույց չէր համարել քննության համարժեքությունը հետևյալ հանգամանքներում՝

- *Baklanov v. Ukraine*, 2013, գործը, որն առնչվում էր պարտադիր զինվորական ծառայության ընթացքում գանգատաբերին ենթադրյալ վատ վերաբերմունքի և ճնշումների ենթարկելուն։
- *V.D. v. Croatia (no. 2)*, 2018, գործը, որն առնչվում էր Գլխավոր դատախազության կողմից վատ վերաբերմունքի մասին պնդումների մասով նոր քննություն նախաձեռնելուն, երբ դրանց վերաբերյալ Դատարանը նախկինում գտել էր 3-րդ հոդվածի խախտում։
- *P.M. and F.F. v. France*, 2021, գործը, որն առնչվում էր ոստիկանության հսկողության տակ գտնվելու ժամանակ հարցաքննության ընթացքում ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի ենթարկվելու գանգատաբերների պնդումներին։

4. Անհապաղություն և ողջամիտ արագություն

1327. 3-րդ հոդվածը պահանջում է, որ քննությունը լինի անհապաղ և կատարվի ողջամիտ արագությամբ։ Թեև կարող են լինել խոչընդոտներ կամ դժվարություններ, որոնք կոնկրետ իրավիճակում կխանգարեն քննության առաջընթացին, իշխանությունների կողմից վատ վերաբերմունքի պնդումների մասով անհապաղ քննություն իրականացնելը կարող է, ընդհանուր առմամբ, դիտարկվել անհրաժեշտ նրանց՝ իրավունքի գերակայությանը հավատարիմ մնալու նկատմամբ հանրության վստահությունը պահպանելու և ապօրինի արարքների հարցում հանցավոր համաձայնության կամ դրանց նկատմամբ հանդուրժողականության երևույթը կանխարգելելու համար (*Bouyid v. Belgium* [GC], 2015, § 121)։

1338. Դատարանը գտել է, որ ազգային իշխանությունները չեն իրականացրել անհապաղ և ողջամիտ արագությամբ քննություն, երբ, *inter alia*՝

- անչափահասի նկատմամբ ընտանեկան բռնությանն առնչվող քրեական դատավարությունը դատական երեք ասյաններում տևել է ութ տարի և չորս ամիս

(*D.M.D. v. Romania*, 2017, § 53; տե՛ս նաև *Y. v. Slovenia*, 2015, § 99, որտեղ սեռական բռնության ենթարկվելու մասին զանգատարերի բողոք ներկայացնելուց մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելն անցել է յոթ տարուց ավելի)։

- բանտում վատ վերաբերմունքի կոնտեքստում հսկիչների գործի դատական քննությունը սկսվել էր հանցագործության մասին բողոքներ ներկայացնելուց հինգ տարի ութ ամիս անց և Դատարանում գործը քննելու ընթացքում դատավարությունը դեռ շարունակվում էր (*Indelicato v. Italy*, 2001, § 37)։
- եղել են վկաներին նույնականացնելու և նրանցից ցուցմունք վերցնելու անհիմն ուշացումներ (*Baranin and Vukčević v. Montenegro*, 2021, § 142, 11 և *Mățăsararu and Savițchi v. Moldova*, 2010, §§ 88 և 93)։
- եղել է քրեական վարույթի անհիմն ձգձգում, որի արդյունքում անցել է վաղեմության ժամկետը (*Angelova and Iliev v. Bulgaria*, 2007, §§ 101-103; տե՛ս նաև *Barovov v. Russia*, 2021, §§ 39 և 42)։
- առանցքային մասնագետը չի հարցաքննվել պատշաճ ժամանակին, չեն բացահայտվել վատ վերաբերմունքի ակնհայտ նշանները, նաև բավականին տևական ժամանակ ոչ մի դատավճիռ չի կայացվել (*I.E. v. the Republic of Moldova*, 2020, § 52)։
- զանգատարերներից, ովքեր անչափահասներ էին և ռասայական հողի վրա ենթադրյալ վատ վերաբերմունքից տուժողներ, ուշացումներով են վերցրել բանավոր ցուցմունք (*M.B. and Others v. Slovakia*, 2021, §§ 82-83)։
- ընտանեկան բռնության կոնտեքստում հարձակման, հետամտման, սպառնալիքների և վատ վերաբերմունքի առնչությամբ զանգատարերի պնդումների մասով նախաձեռնված մի շարք քննությունների և հաջորդող քրեական վարույթների մասով կա՛մ անցել էր վաղեմության ժամկետը, կա՛մ քննարկվող միջադեպերից տարիներ անց դրանք դեռևս ավարտված չէին իշխանությունների անգործության հետևանքով (*M.S. v. Italy*, 2022, §§ 141 և 150)։

1349. Մյուս կողմից, Դատարանը գտել էր, որ չէր խախտվել քննություն իրականացնելու անհապաղության և ողջամիտ արագության պահանջը, երբ, օրինակ՝

- քննության տևողությունը հնարավոր էր բացատրել իրականացված հարցումների շրջանակով, քանի որ կազմակերպվել էին բազմաթիվ լուսմներ և ոչ պակաս, քան չորս փորձագիտական գնահատումներ (*Ghedir and Others v. France*, 2015, § 133)։
- հատուցման (անգլ.՝ «compensation») վարույթը շատ երկար էր տևել (15 տարի), սակայն պարզվել էին զանգատարերին ծանր մարմնական վնասվածք հասցնելու փաստական հանգամանքները, պատասխանատվության էին ենթարկվել մեղավորները և զանգատարերին հատուցում էր տրամադրվել (*Isayeva v. Ukraine*, 2018, §§ 63-66)։
- չնայած գործի հարաբերական բարդությանը, որը պահանջում էր հարցաքննել մի շարք վկաների, ստանալ միջադեպի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն և ձեռք բերել այլ ապացույցներ՝ քննության ընդհանուր տևողությունը կազմել էր վեց ամիս (*V.D. v. Croatia (no. 2)*, 2018, § 80)։

5. Հանրային հսկողությունը և տուժողի մասնակցությունը

13540. Քննությունը պետք է ապահովի հանրային հսկողության տարր, որը թե՛ գործնականում, թե՛ տեսականորեն կերաշխավորի հաշվետվողականություն (*Al Nashiri v. Romania*, 2018, § 641 և դրանում մեջբերված գործերը)։

1361. Ավելին, տուժողը պետք է հնարավորություն ունենա արդյունավետ կերպով մասնակցել քննությանը (*Bouyid v. Belgium [GC]*, 2015, § 122 և *X and Others v. Bulgaria [GC]*, 2021, § 189)։ Սակայն, ոստիկանության հաղորդումների և քննության նյութերի տարածումն ու հրապարակումը կարող են ընդգրկել զգայուն հարցեր՝ մասնավոր անհատների կամ այլ քննությունների համար հնարավոր պրեյուդիցիալ հետևանքներով։ Հետևաբար, տուժողին կամ նրա ամենամերձավոր ազգականներին ընթացող քննության նյութերը հասանելի դարձնելը չի կարելի համարել ավտոմատ պահանջ։ Պահանջվող հասանելիությունը կարելի է ապահովել վարույթի այլ փուլերում, իսկ քննչական մարմինները պարտավոր չեն բավարարել քննության

ընթացքում կոնկրետ քննչական գործողություն կատարելու ամեն միջնորդություն: (*Stevan Petrović v. Serbia*, 2021, § 109):

1372. Դատարանը գտել է, որ տուժողը քննությանը բավարար չափով մասնակցելու հնարավորություն չի ունեցել կամ դրա նկատմամբ համարժեք հանրային հսկողություն չի ապահովվել, երբ՝

- քննիչն անձամբ չէր լսել տուժողներին կամ չէր նշել իրադարձությունների նրանց վարկածը որոշումների մեջ, որոնք նրանց անգամ չէին տրամադրվել (*Dedovskiy and Others v. Russia*, 2008, § 92).
- ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէր կոնկրետ ընթացակարգ, որը մինչդաստական վարույթի շրջանակներում նախատեսում էր գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն և, մասնավորապես, թվարկված չէին դրանք տրամադրելու կամ մերժելու հիմքերը, ինչ ծավալով բողոք բերած անձին կարող էին տրամադրվել նյութերը, համապատասխան հարցումներն ուսումնասիրելու և նյութերը տրամադրելու ժամկետները (*Oleksiy Mykhaylovych Zakharkin v. Ukraine*, 2010, § 73).
- իշխանությունները գանգատաբերներից հետևողականորեն թաքցրել էին իրենց որոշումների մասին տեղեկությունները կամ էապես ուշացրել էին նման տեղեկությունների տրամադրումը՝ խախտելով ներպետական օրենսդրությամբ ուղղարկվող սահմանափակ պահանջը (*Chernega and Others v. Ukraine*, 2019, § 166):

1383. Մյուս կողմից, Դատարանը չի գտել հանրային հսկողության կամ տուժողի մասնակցության հետ կապված խնդիր, երբ տուժողին տրամադրվել էր համարժեք տեղեկատվություն, ինչպես նաև՝ գործի նյութերը՝ հնարավորություն տալով նրան ներկայացնել փաստեր և ապացույցներ, որոնք պետք է ձեռք բերվեին քննությանը (*V.D. v. Croatia (no. 2)*, 2018, §§ 78):

Ե. Քրեական հետապնդմանը, պատժին և հատուցմանն առնչվող խնդիրները

1394. Դատարանը շեշտել է, որ արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորությունը ոչ թե արդյունքի, այլ միջոցների պարտավորություն է (*X and Others v. Bulgaria* [GC], 2021, § 186): Երբ պաշտոնական քննության արդյունքում ազգային դատարաններում նախաձեռնվել է վարույթ՝ վարույթն ամբողջությամբ, այդ թվում՝ դատավարական փուլը, պետք է բավարարի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջները: Նշվածն ընդգրկում է քննարկվող վարույթի ավարտին նշանակվող պատիժները: Թեև չկա բացարձակ պարտավորություն, որ քրեական հետապնդման բոլոր դեպքերն ավարտվեն դատապարտմամբ կամ կոնկրետ պատժի նշանակմամբ՝ ազգային դատարանները, ոչ մի պարագայում, չպետք է անպատիժ թողնեն ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության դեմ հարձակումները կամ բացառապես թեթև պատիժներ նշանակեն ծանր հանցագործությունների համար: Հետևաբար, Դատարանի քննության համար կարևոր հարց է, թե արդյոք և ինչ չափով կարելի է համարել, որ եզրակացությունների հանգեղիս դատարանները մանրակրկիտ են քննել գործը, որպեսզի վնաս չհասցվի դատական համակարգի զսպող ազդեցությանը և այն էական դերին, որն այն պետք է կատարի վատ վերաբերմունքի արգելքի խախտումները կանխարգելելու հարցում (*Sabalić v. Croatia*, 2021, § 97):

1405. Հետևաբար, թեև վատ վերաբերմունքի համար համարժեք պատիժների ընտրության հարցում ազգային իշխանություններին և դատարաններին տրված է էական հայեցողություն, Դատարանը պետք է իրականացնի վերանայման որոշակի լիազորություն և միջամտի այն դեպքերում, երբ առկա է ակնհայտ անհամաչափություն արարքի ծանրության և նշանակված պատժի միջև (*Myumyun v. Bulgaria*, 2015, § 67):

1416. Սրա հետ կապված՝ գործնականում քննության արդյունավետ լինելու համար նախապայման է, որ պետությունն ընդունած լինի քրեաիրավական նորմեր, որոնք քրեականացնում են 3-րդ հոդվածին հակասող արարքները (*Cestaro v. Italy*, 2015, § 209):

1427. Եթե պետության ներկայացուցիչներին ներկայացվում է վատ վերաբերմունք ընդգրկող հանցագործություն կատարելու մեղադրանք՝ կարևոր է քննության կամ դատավարության ընթացքում դադարեցնել նրանց լիազորությունները, իսկ մեղադրական դատավճռի դեպքում՝ ազատել զբաղեցրած պաշտոնից (*Gäfgen v. Germany* [GC], 2010, § 125; *Barovov v. Russia*, 2021, § 43):

1438. Դատարանն արձանագրել է նաև, որ պետության ներկայացուցիչների կատարած խոշտանգմանը կամ դրսևորած վատ վերաբերմունքին առնչվող գործերով քրեական վարույթները չպետք է կարճվեն վաղեմության ժամկետի հիմքով, իսկ համաներումը և ներումը պետք է անընդունելի լինեն նման դեպքերում: Ավելին, վաղեմության ժամկետի կիրառման եղանակը պետք է համապատասխանի Կոնվենցիայի պահանջներին: Հետևաբար, դժվար է ընդունել վաղեմության ժամկետների կոշտ սահմանափակումը, որը չի նախատեսում բացառություններ (*Mocanu and Others v. Romania* [GC], 2014, § 326): Այս սկզբունքը տարածվել է նաև մասնավոր անհատների կատարած բռնարարքների վրա՝ մասնավորապես, երբ դրանք առնչվում են մարդու հիմնարար իրավունքների կոպիտ խախտումներին (*Pulfer v. Albania*, 2018, § 83 ֆիզիկական բնության կոնտեքստում; *E.G. v. the Republic of Moldova*, 2021, § 43 սեռական բնության կոնտեքստում և *M.S. v. Italy*, 2022, § 144 ընտանեկան բնության կոնտեքստում):

1449. Այսպես՝ Դատարանն արձանագրեց 3-րդ հոդվածի դատավարական բաղադրիչի խախտում այն գործերով, որոնցում վաղեմության ժամկետի կիրառումը պայմանավորված էր նրանով, որ իշխանություններն անհապաղ և պատշաճ փութաջանությամբ չէին գործել կամ քրեական հետապնդումը սահմանափակվել էր ժամկետներով, ինչը պայմանավորված էր նրանով, որ ներպետական մարմինները խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերին համարժեք որակում չէին տվել՝ համարելով դրանք նվազ ծանր հանցագործություններ, ինչը կրճատել էր վաղեմության ժամկետները և հնարավորություն տվել հանցագործին խուսափել քրեական պատասխանատվությունից (*Advisory opinion on the applicability of statutes of limitation to prosecution, conviction and punishment in respect of an offence constituting, in substance, an act of torture* [GC], §§ 61-62, 2022):

14550. Վերջապես, այն դեպքերում, երբ պետության ներկայացուցիչները դիտավորությամբ են դրսևորել վատ վերաբերմունք՝ խախտելով 3-րդ հոդվածը, Դատարանը հետևողականորեն գտել է, որ բավարար փոխհատուցում (անգլ.՝ «redress») տրամադրելու համար անհրաժեշտ են երկու միջոցներ: Նախ պետական մարմինները պետք է իրականացրած լինեին բազմակողմանի և արդյունավետ քննություն, որը պետք է հանգեցնեք մեղավորների ինքնության բացահայտմանը և պատժին: Երկրորդ, անհրաժեշտության դեպքում գանգատաբերին պետք է տրամադրվի հատուցում կամ, առնվազն, հատուցում պահանջելու և ստանալու հնարավորություն այն վնասների համար, որոնք գանգատաբերը կրել է վատ վերաբերմունքի արդյունքում (*Gäfgen v. Germany* [GC], 2010, § 116; *Razzakov v. Russia*, 2015, § 50):

2. Ատելության հիմքով կատարված հանցագործությունների քննություն

1461. Դատարանը հատուկ պահանջ է սահմանել ռասայական ենթատեքստով ցանկացած հարձակման քննության համար, որը պետք է իրականացվի ջանադրաբար և անկողմնակալ՝ նկատի ունենալով հասարակության կողմից ռասիզմի դատապարտումը մշտապես վերահաստատելու անհրաժեշտությունը, որի նպատակն է պահպանել փոքրամասնությունների վստահությունն առ այն, որ իշխանություններն ունակ են պաշտպանել իրենց ռասայական բռնության սպառնալիքից (*Antayev and Others v. Russia*, 2014, § 110):

1472. Հետևաբար, երբ իրականացվում է հնարավոր ռասիստական տրամադրություններով պայմանավորված բռնի միջադեպերի քննություն, պետական մարմիններից պահանջվում է ձեռնարկել ողջամիտ բոլոր միջոցները պարզելու համար, թե արդյոք եղել են ռասիստական շարժառիթներ և արդյոք անձի էթնիկ ծագումով պայմանավորված ատելության զգացումները կամ կանխակալ մոտեցումները որևէ դեր խաղացել են այդ իրադարձություններում: Հավասար վերաբերմունքը ռասայական շարժառիթներով գործադրված և ռասիստական ենթատեքստ չունեցող բռնությանը և դաժանությանը հավասարազոր է այք փակելուն այն արարքների

առանձնահատկության վրա, որոնք չափազանց քայքայիչ են մարդու հիմնարար իրավունքների համար (*Abdu v. Bulgaria*, 2014, § 44): Նշված պարտավորությունը Կոնվենցիայի 14-րդ հոդվածով՝ 3-րդ հոդվածի համակցությամբ, պետությունների վրա դրված պարտականության, ինչպես նաև Կոնվենցիայի 3-րդ հոդվածից բխող դատավարական պարտավորությունների մաս է (*M.F. v. Hungary*, 2017, § 73): Այն կիրառելի է նաև, երբ 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունք է դրսևորվել մասնավոր անհատի կողմից (*Abdu v. Bulgaria*, 2014, § 44):

1483. Ավելին, նման քննությունն անդրադառնում է ոչ միայն տուժողի փաստացի կամ ենթադրյալ անձնական կարգավիճակի կամ հատկանիշների հիման վրա կատարված բռնարարքներին, այլև մեկ այլ անձի հետ տուժողի փաստացի կամ ենթադրյալ կապի կամ փոխկապակցվածության հիման վրա կատարված բռնարարքներին, երբ այդ անձը, փաստացի կամ ենթադրաբար, ունի հատուկ կարգավիճակ կամ պաշտպանված հատկանիշ (*Škorjanec v. Croatia*, 2017, § 56):

1494. Գործնականում հաճախ դժվար է ապացուցել ռասայական շարժառիթը: Բռնարարքի հնարավոր ռասիստական ենթատեքստը քննելու պատասխանող պետության պարտավորությունը՝ բոլոր հնարավոր ջանքերը գործադրելու պարտավորություն է, որը բացարձակ չէ: Իշխանությունները պետք է անեն տվյալ հանգամանքներում ողջամտորեն հնարավոր ամեն բան ապացույցները հավաքելու և պահպանելու, ճշմարտությունը բացահայտելու բոլոր գործնական միջոցները գործադրելու և լիարժեք պատճառաբանված, անկողմնակալ և օբյեկտիվ որոշումներ կայացնելու համար՝ չանտեսելով կասկածելի փաստերը, որոնք կարող են վկայել ռասայական շարժառիթներով բռնության մասին (*Antayev and Others v. Russia*, 2014, § 122), տե՛ս նաև քաղաքական անհանդուրժողականության հետևանքով առաջացած բռնության մասին (*Verzilov and Others v. Russia*, 2023, § 78):

1505. Նույն նկատառումներն առաջանում են, օրինակ, կրոնական անհանդուրժողականության, գենդերային հիմքով խտրականության կամ սեռական կողմնորոշման շարժառիթներով պայմանավորված բռնության դեպքում (*Sabalić v. Croatia*, 2021, § 94):

1516. Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղումով՝ *Case-Law Guide on Article 14 and Article 1 of Protocol No. 12 - Prohibition of Discrimination*:

Է. Դատավարական պարտավորություններ անդրսահմանային կոնտեքստներում

1527. Քրեական գործի քննության արդյունավետության պահանջը կարող է որոշ հանգամանքներում ընդգրկել քննչական մարմինների՝ այլ պետության իշխանությունների հետ համագործակցելու պարտավորություն, որը ենթադրում է աջակցության դիմելու կամ այն տրամադրելու պարտավորություն: Այս պարտավորությունների բնույթը և շրջանակն անխուսափելիորեն պայմանավորված են յուրաքանչյուր գործի հանգամանքներով: Օրինակ՝ հիմնական իրեղեն ապացույցները կարող են գտնվել տվյալ Պայմանավորվող պետության տարածքում կամ կասկածյալները փախուստի են դիմել այդ երկիր: Սա նշանակում է, որ համապատասխան պետությունները պետք է ձեռնարկեն հնարավոր բոլոր ողջամիտ քայլերը միմյանց հետ համագործակցելու ուղղությամբ՝ բարեխղճորեն սպառելով քրեական հարցերով իրավական փոխօգնության և համագործակցության վերաբերելի միջազգային գործիքներով իրենց հասանելի հնարավորությունները: Թեև Դատարանը լիազորված չէ Կոնվենցիայից դուրս վերահսկել միջազգային պայմանագրերի կամ պարտավորությունների կատարումը, այն, սովորաբար, գնահատում է՝ արդյոք պատասխանող պետությունն օգտագործել է այս գործիքներով հասանելի հնարավորությունները (*X and others v. Bulgaria* [GC], 2021, § 19):

Ը. Դատավարական պարտավորությունների վերականգնում

1538. Դատավարական պարտավորությունը կարող է վերականգնվել նոր զարգացումների՝ նոր ապացույցների կամ տեղեկությունների ի հայտ գալու հետևանքով, որոնք կասկածի տակ են

դնում ավելի վաղ իրականացված քննության կամ դատավարության արդյունքները (տե՛ս *Egmez v. Cyprus* (dec.), 2012, § 63): Դատավարական պարտավորությամբ պահանջվող հետագա քննության բնույթը և ծավալներն անխուսափելիորեն պայմանավորված են յուրաքանչյուր գործի հանգամանքներով և կարող են էապես տարբերվել վատ վերաբերմունքից անմիջապես հետո ակնկալվող քննության բնույթից և ծավալներից (*Jeronovičs v. Latvia* [GC], 2016, § 107):

Մեջբերված գործերի ցանկը

Սույն ուղեցույցում մեջբերված նախադեպային իրավունքը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներին կամ որոշումներին և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով», անգլ.՝ «Commission») որոշումներին կամ զեկույցներին:

Եթե այլ բան նշված չէ, ապա բոլոր հղումերը վերաբերում են Դատարանի պալատի կողմից ըստ էության կայացված վճիռն: Հայերեն թարգմանության մեջ «(որոշում)» կամ հղման անգլերեն տարբերակում (dec.) բառը նշանակում է, որ հղում է արվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄԴ]» հասպավումը (հղման անգլերեն տարբերակում՝ [GC]) նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից:

Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակում մեջբերված գործերի վրա տրված գերկապային հղումներն ուղղորդվում են դեպի «HUDOC» շտեմարան (<http://hudoc.echr.coe.int>), որտեղ հասանելի են Դատարանի (Մեծ պալատի, պալատի և հանձնաժողովի վճիռները և որոշումները, ծանուցված գործերը, խորհրդատվական կարծիքները և իրավական ամփոփագրերը Նախադեպային իրավունքի վերաբերյալ տեղեկատվական ծանոթագրությունից) և Հանձնաժողովի (որոշումները և զեկույցները) նախադեպային իրավունքը, ինչպես նաև Նախարարների կոմիտեի ընդունած բանաձևերը:

Դատարանն իր վճիռները և որոշումները կայացնում է անգլերեն և/կամ ֆրանսերեն, որոնք Դատարանի երկու պաշտոնական լեզուներն են: «HUDOC»-ը պարունակում է նաև բազմաթիվ կարևոր գործերի թարգմանություններն ավելի քան երեսուն ոչ պաշտոնական լեզուներով, ինչպես նաև՝ հղումներ այլ կազմակերպությունների պատրաստած և նախադեպային պրակտիկային վերաբերող մոտ 100 առցանց հավաքածուներին:

—A—

A v. Russia, no. 37735/09, 12 November 2019

A. v. the United Kingdom, 23 September 1998, *Reports of Judgments and Decisions* 1998-VI

A. and Others v. the United Kingdom [GC], no. 3455/05, ECHR 2009

A.L. (X.W.) v. Russia, no. 44095/14, 29 October 2015

A.P. v. Slovakia, no. 10465/17, 28 January 2020

A.P., Garçon and Nicot v. France, nos. 79885/12 and 2 others, 6 April 2017

Abdu v. Bulgaria, no. 26827/08, 11 March 2014

Abdyusheva and Others v. Russia, nos. 58502/11 and 2 others, 26 November 2019

Abu Zubaydah v. Lithuania, no. 46454/11, 31 May 2018

Advisory opinion on the applicability of statutes of limitation to prosecution, conviction and punishment in respect of an offence constituting, in substance, an act of torture [GC], request no. P16-2021-001, Armenian Court of Cassation, 26 April 2022

Aggerholm v. Denmark, no. 45439/18, 15 September 2020

Akkad v. Türkiye, no.1557/19, 21 June 2022

Akkum v. Turkey, no. 21894/93, ECHR 2005-II (extracts)

Akpınar and Altun v. Turkey, no. 56760/00, 27 February 2007

Aksoy v. Turkey, 18 December 1996, *Reports of Judgments and Decisions* 1996-VI

Ali Güneş v. Turkey, no. 9829/07, 10 April 2012

Al Nashiri v. Poland, no. 28761/11, 24 July 2014

Al Nashiri v. Romania, no. 33234/12, 31 May 2018

Al-Saadoon and Mufdhi v. the United Kingdom, no. 61498/08, ECHR 2010

Ananyev and Others v. Russia, nos. 42525/07 and 60800/08, 10 January 2012

Angelova and Iliev v. Bulgaria, no. 55523/00, 26 July 2007

Antayev and Others v. Russia, no. 37966/07, 3 July 2014
Anzhelo Georgiev and Others v. Bulgaria, no. 51284/09, 30 September 2014
Archip v. Romania, no. 49608/08, 27 September 2011
Assenov and Others v. Bulgaria, 28 October 1998, *Reports of Judgments and Decisions* 1998-VIII
Association Innocence en Danger and Association Enfance et Partage v. France, nos. 15343/15 and 16806/15, 4 June 2020
Aswat v. UK, no. 17299/12, 16 April 2013
Aydın v. Turkey, 25 September 1997, *Reports of Judgments and Decisions* 1997-VI

—B—

B v. Russia, no 36328/20, 7 February 2023
Babar Ahmad and Others v. the United Kingdom, nos. 24027/07 and 4 others, 10 April 2012
Baklanov v. Ukraine, no. 44425/08, 24 October 2013
Baranin and Vukčević v. Montenegro, nos. 24655/18 and 24656/18, 11 March 2021
Baronov v. Russia, no. 9183/09, 15 June 2021
Barta v. Hungary, no. 26137/04, 10 April 2007
Bataliny v. Russia, no. 10060/07, 23 July 2015
Bati and Others v. Turkey, nos. 33097/96 and 57834/00, ECHR 2004-IV (extracts)
Beganović v. Croatia, no. 46423/06, 25 June 2009
Berliński v. Poland, nos. 27715/95 and 30209/96, 20 June 2002
Blokhin v. Russia[GC], no. 47152/06, 23 March 2016
Boicenco v. Moldova, no. 41088/05, 11 July 2006
Bouyid v. Belgium [GC], no. 23380/09, ECHR 2015
Burlya and Others v. Ukraine, no. 3289/10, 6 November 2018
Bursuc v. Romania, no. 42066/98, 12 October 2004
Buturugă v. Romania, no. 56867/15, 11 February 2020

—C—

Cangöz and Others v. Turkey, no. 7469/06, 26 April 2016
Cestaro v. Italy, no. 6884/11, 7 April 2015
Çevik v. Turkey (no. 2), no. 39326/02, 27 August 2010
Chember v. Russia, no. 7188/03, ECHR 2008
Chernega and Others v. Ukraine, no. 74768/10 18 June 2019
Ciorap v. Moldova, no. 12066/02, 19 June 2007

—D—

D.F. v. Latvia, no. 11160/07, 29 October 2013
D.M.D. v. Romania, no. 23022/13, 3 October 2017
D.P. and J.C. v. the United Kingdom, no. 38719/97, 10 October 2002
Dedovskiy and Others v. Russia, no. 7178/03, ECHR 2008 (extracts)
Dembele v. Switzerland, no. 74010/11, 24 September 2013
Dorđević v. Croatia, no. 41526/10, ECHR 2012
Durđević v. Croatia, no. 52442/09, ECHR 2011 (extracts)
Dvořáček v. the Czech Republic, no. 12927/13, 6 November 2014

—E—

E.G. v. the Republic of Moldova, no. 37882/13, 13 April 2021

Egmez v. Cyprus (dec.), no. 12214/071, 18 September 2012
Elberte v. Latvia, no. 61243/08, ECHR 2015
El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia [GC], no. 39630/09, ECHR 2012
Emin Huseynov v. Azerbaijan, no. 59135/09, 7 May 2015
Enzile Özdemir v. Turkey, no. 54169/00, 8 January 2008

—F—

Filippovy v. Russia, no. 19355/09, 22 March 2022

—G—

G.M. and Others v. the Republic of Moldova, no. 44394/15, 22 February 2023
Gäfgen v. Germany [GC], no. 22978/05, ECHR 2010
Georgel and Georgeta Stoicescu v. Romania, no. 9718/03, 26 July 2011
Ghedir and Others v. France, no. 20579/12, 16 July 2015
Ghișoiu v. Romania, (dec.), no. 40228/20, 29 November 2022
Gorobet v. Moldova, no. 30951/10, 11 October 2011
Grzęda v. Poland [GC], no. 43572/18, 15 March 2022
Gutsanovi v. Bulgaria, no. 34529/10, ECHR 2013 (extracts)

—H—

Harkins and Edwards v. the United Kingdom, nos. 9146/07 and 32650/07, 17 January 2012
Hasan İlhan v. Turkey, no. 22494/93, 9 November 2004
Herczegfalvy v. Austria, 24 September 1992, Series A no. 244
Hristovi v. Bulgaria, no. 42697/05, 11 October 2011
Hristozov and Others v. Bulgaria, nos. 47039/11 and 358/12, ECHR 2012 (extracts)
Horion v. Belgium, no. 37928/20, 9 May 2023
Hovhannisyán v. Armenia, no. 18419/13, 19 July 2018
Hutchinson v. the United Kingdom [GC], no. 57592/08, 17 January 2017

—I—

I.C. v. Romania, no. 36934/08, 24 May 2016
I.E. v. the Republic of Moldova, no. 45422/13, 26 May 2020
Idalov v. Russia [GC], no. 5826/03, 22 May 2012
Identoba and Others v. Georgia, no. 73235/12, 12 May 2015
Ilaşcu and Others v. Moldova and Russia [GC], no. 48787/99, ECHR 2004-VII
İlhan v. Turkey [GC], no. 22277/93, ECHR 2000-VII
Ilias and Ahmed v. Hungary [GC], no. 47287/15, 21 November 2019
Ilievi and Ganchevi v. Bulgaria, nos. 69154/11 and 69163/11, 8 June 2021
Imakayeva v. Russia, no. 7615/02, ECHR 2006-XIII (extracts)
Indelicato v. Italy, no. 31143/96, 18 October 2001
Ioan Pop and Others v. Romania, no. 52924/09, 6 December 2016
Ireland v. the United Kingdom, 18 January 1978, Series A no. 25
Ireland v. the United Kingdom (revision), no. 5310/71, 20 March 2018
Irina Smirnova v. Ukraine, no. 1870/05, 13 October 2016
Isayeva v. Ukraine, no. 35523/06, 4 December 2018
Iwańczuk v. Poland, no. 25196/94, 15 November 2001
İzci v. Turkey, no. 42606/05, 23 July 2013

—J—

J.I. v. Croatia, no. 35898/16, 8 September 2022
Jalloh v. Germany [GC], no. 54810/00, ECHR 2006-IX
Janowiec and Others v. Russia [GC], nos. 55508/07 and 29520/09, ECHR 2013
Jeronovičs v. Latvia [GC], no. 44898/10, 5 July 2016

—K—

Kagirov v. Russia, no. 36367/09, 23 April 2015
Kalashnikov v. Russia, no. 47095/99, ECHR 2002-VI
Karachentsev v. Russia, no. 23229/11, 17 April 2018
Khadzhaliyev and Others v. Russia, no. 3013/04, 6 November 2008
Khan v. France, no. 12267/16, 28 February 2019
Khasanov and Rakhmanov v. Russia [GC], nos. 28492/15 and 49975/15, 29 April 2022
Khlaifia and Others v. Italy [GC], no. 16483/12, ECHR 2016 (extracts)
Konstantin Markin v. Russia, no. 30078/06, 22 March 2012
Kudła v. Poland [GC], no. 30210/96, ECHR 2000-XI
Kurt v. Austria [GC], no. 62903/15, 15 June 2021

—L—

Labita v. Italy [GC], no. 26772/95, ECHR 2000-IV
López Ostra v. Spain, 9 December 1994, Series A no. 303-C
Lutsenko and Verbytskyi v. Ukraine, nos. 12482/14 and 39800/14, 21 January 2021
Lyalyakin v. Russia, no. 31305/09, 12 March 2015
Lyapin v. Russia, no. 46956/09, 24 July 2014

—M—

M. and Other v. Italy and Bulgaria, no. 40020/03, 17 Decembr 2021
M.B. and Others v. Slovakia, no. 45322/17, 1 April 2021
M.C. v. Bulgaria, no. 39272/98, ECHR 2003-XII
M.F. v. Hungary, no. 45855/12, 31 October 2017
M.G.C. v. Romania, no. 61495/11, 15 March 2016
M.P. and Others v. Bulgaria, no. 22457/08, 15 November 2011
M.S. v. Croatia (no. 2), no. 75450/12, 19 February 2015
M.S. v. Italy, no. 32715/19, 7 July 2022
M.S.S. v. Belgium and Greece [GC], no. 30696/09, ECHR 2011
Mafalani v. Croatia, no. 32325/13, 9 July 2015
Makaratzis v. Greece [GC], no. 50385/99, ECHR 2004-XI
Maslova and Nalbandov v. Russia, no. 839/02, 24 January 2008
Mățășaru and Savițchi v. Moldova, no. 38281/08, 2 November 2010
Members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and Others v. Georgia, no. 71156/01,
3 May 2007
Milanović v. Serbia, no. 44614/07, 14 December 2010
Mocanu and Others v. Romania [GC], nos. 10865/09 and 2 others, ECHR 2014 (extracts)
Mozer v. Moldova and Russia [GC], no. 11138/10, 23 February 2016
Mubilanzila Mayeka and Kaniki Mitunga v. Belgium, no. 13178/03, ECHR 2006-XI
Murray v. the Netherlands [GC], no. 10511/10, 26 April 2016
Muršić v. Croatia [GC], no. 7334/13, ECHR 2016
Musayev and Others v. Russia, nos. 57941/00 and 2 others, 26 July 2007

Mustafa Tunç and Fecire Tunç v. Turkey [GC], no. 24014/05, 14 April 2015
Myummyun v. Bulgaria, no. 67258/13, 3 November 2015

—N—

N.B. v. Slovakia, no. 29518/10, 12 June 2012
N.H. and Others v. France, nos. 28820/13 and 2 others, 2 July 2020
Najafli v. Azerbaijan, no. 2594/07, 2 October 2012
Naoumenko v. Ukraine, no. 42023/98, 10 February 2004
Necdet Bulut v. Turkey, no. 77092/01, 20 November 2007
Neshkov and Others v. Bulgaria, nos. 36925/10 and 5 others, 27 January 2015
Nesibe Haran v. Turkey, no. 28299/95, 6 October 2005
Nevmerzhitsky v. Ukraine, no. 54825/00, ECHR 2005-II (extracts)
Nicolae Virgiliu Tănase v. Romania [GC], no. 41720/13, 25 June 2019

—O—

Ochigava v. Georgia, no. 14142/15, 16 February 2023
Oganezova v. Armenia, nos. 71367/12 and 72961/12, 17 May 2022
O’Keeffe v. Ireland [GC], no. 35810/09, ECHR 2014 (extracts)
Oleksiy Mykhaylovych Zakharkin v. Ukraine, no. 1727/04, 24 June 2010
Öneryıldız v. Turkey [GC], no. 48939/99, ECHR 2004-XII
Orhan v. Turkey, no. 25656/94, 18 June 2002

—P—

P.M. and F.F. v. France, nos. 60324/15 and 60335/15, 18 February 2021
Pantea v. Romania, no. 33343/96, ECHR 2003-VI (extracts)
Petrosyan v. Azerbaijan, no. 32427/16, 4 November 2021
Pranjić-M-Lukić v. Bosnia and Herzegovina, no. 4938/16, 2 June 2020
Premininy v. Russia, no. 44973/04, 10 February 2011
Price v. United Kingdom, no. 33394/96, 10 October 2001
Pulfer v. Albania, no. 31959/13, 20 November 2018

—R—

R.B. v. Estonia, no. 22597/16, 22 June 2021
R.R. v. Poland, no. 27617/04, ECHR 2011 (extracts)
R.R. and R.D. v. Slovakia, no. 20649/18, 1 September 2020
R.S. v. Hungary, no. 65290/14, 2 July 2019
Ramirez Sanchez v. France [GC], no. 59450/00, ECHR 2006-IX
Razzakov v. Russia, no. 57519/09, 5 February 2015
Rodić and Others v. Bosnia and Herzegovina, no. 22893/05, 27 May 2008
Rooman v. Belgium [GC], no. 18052/11, 31 January 2019
Roth v. Germany, nos. 6780/18 and 30776/18, 22 October 2020

—S—

S.F.K. v. Russia, no. 5578/12, 11 October 2022
S.M. v. Croatia [GC], no. 60561/14, 25 June 2020

S.P. and Others v. Russia, nos. 36463/11 and 10 others, 2 May 2023
Sabalić v. Croatia, no. 50231/13, 14 January 2021
Salakhov and Islyamova v. Ukraine, no. 28005/08, 14 March 2013
Salman v. Turkey [GC], no. 21986/93, ECHR 2000-VII
Sanchez-Sanchez v. the United Kingdom, no. 22854/20, 3 November 2022
Satybalova and Others v. Russia, no. 79947/12, 30 June 2020
Savran v. Denmark [GC], no. 57467/15, 7 December 2021
Schmidt v. Germany (dec.), no. 32352/02, 5 January 2006
Selçuk and Asker v. Turkey, 24 April 1998, *Reports of Judgments and Decisions* 1998-II
Selmouni v. France [GC], no. 25803/94, ECHR 1999-V
Shamayev and Others v. Georgia and Russia, no. 36378/02, ECHR 2005-III
Shlykov and Others v. Russia, nos. 78638/11 and 3 others, 19 January 2021
Shmorgunov and Others v. Ukraine, nos. 15367/14 and 13 others, 21 January 2021
Simeonovi v. Bulgaria [GC], no. 21980/04, 12 May 2017
Škorjanec v. Croatia, no. 25536/14, 28 March 2017
Slyusarev v. Russia, no. 60333/00, 20 April 2010
Smith and Grady v. the United Kingdom, nos. 33985/96 and 33986/96, ECHR 1999-VI
Soare and Others v. Romania, no. 24329/02, 22 February 2011
Soering v. the United Kingdom, 7 July 1989, Series A no. 161
Stevan Petrović v. Serbia, nos. 6097/16 and 28999/19, 20 April 2021
Suleymanov v. Russia, no. 32501/11, 22 January 2013
Svinarenko and Slyadnev v. Russia [GC], nos. 32541/08 and 43441/08, ECHR 2014 (extracts)

—T—

T. v. The United Kingdom [GC], no. 24724/94, 16 December 1999
T.M. and C.M. v. the Republic of Moldova, no. 26608/11, 28 January 2014
Tabesh v. Greece, no. 8256/07, 26 November 2009
Tali v. Estonia, no. 66393/10, 13 February 2014
Talpis v. Italy, no. 41237/14, 2 March 2017
Tarak and Depe v. Turkey, no. 70472/12, 9 April 2019
Taştan v. Turkey, no. 63748/00, 4 March 2008
Trévalec v. Belgium, no. 30812/07, 14 June 2011
Tunikova and Others v. Russia, no. 55974/16 and 3 others, 14 December 2021
Tyrer v. the United Kingdom, 25 April 1978, Series A no. 26

—V—

V. v. the United Kingdom [GC], no. 24888/94, ECHR 1999-IX
V.C. v. Slovakia, no. 18968/07, ECHR 2011 (extracts)
V.D. v. Croatia (no. 2), no. 19421/15, 15 November 2018
V.K. v. Russia, no. 68059/13, 7 March 2017
Valašinas v. Lithuania, no. 44558/98, ECHR 2001-VIII
Varnava and Others v. Turkey [GC], nos. 16064/90 and 8 others, ECHR 2009
Verzilov and Others v. Russia, no. 25276/15, 29 August 2023
Vincent v. France, no. 6253/03, 24 October 2006
Vinter and Others [GC], nos. 66069/09 and 2 others, ECHR 2013 (extracts)
Virabyan v. Armenia, no. 40094/05, 2 October 2012
Virgiliu Tănase v. Romania [GC], no. 41720/13, 25 June 2019
Volodina v. Russia, no. 41261/17, 9 July 2019

—W—

Wainwright v. the United Kingdom, no. 12350/04, ECHR 2006-X
Wieser v. Austria, no. 2293/03, 22 February 2007
Willcox and Hurford v. the United Kingdom (dec.), nos. 43759/10 and 43771/12, ECHR 2013
Women's Initiatives Supporting Group and Others v. Georgia, no. 73204/13 and 74959/13,
16 December 2021

—X—

X and Others v. Bulgaria [GC], no. 22457/16, 2 February 2021

—Y—

Y. v. Slovenia, no. 41107/10, ECHR 2015 (extracts)
Y.P. v. Russia, no. 43399/13, 20 September 2022
Yakovlyev v. Ukraine, no.42010/18, 8 December 2022
Yankov v. Bulgaria, no. 39084/97, ECHR 2003-XII (extracts)
Yaroslav Belousov v. Russia, nos. 2653/13 and 60980/14, 4 October 2016
Yotova v. Bulgaria, no. 43606/04, 23 October 2012

—Z—

Z and Others v. the United Kingdom [GC], no. 29392/95, ECHR 2001-V
Z.A. and Others v. Russia [GC], nos. 61411/15 and 3 others, 21 November 2019
Zontul v. Greece, no. 12294/07, 17 January 2012